# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 39 (1439) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 31, 2009
VOLUME 29, NO. 39 (1439) SATURDAY, OCTOBER 31, 2009

*Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի*

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԱԾ ՈՃԻՐԻ ԴԱՒԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Թուականէս տասը տարիներ առաջ, օտարին՝ թուրք ու ռուսին դարաւոր ենթակայութենէ ետք, որպէս անկախ պետութիւն վերահաստատուելու, զօրանալու եւ վերածաղկելու սեմին գտնուող նորանկախ Հայաստան աշխարհ, 1999-ի Հոկտեմբեր 27-ին, վերստին ինկաւ այդ դժխեմ, ստրկական կացութեան մէջ, այս անգամ իրենց սեփական ժողովուրդի ծոցէն ծնած հայանուն իշխանաւորներ՝ այսպէս կոչուած նախագահի, նախարարի, եւ ապահովական ուժերու հրամանատարութեան դաւադիր տնօրինութեամբ:

Հայրենի երկնակամարի վրայ սեւ ամպեր կուտակած Հոկտեմբերի 27-ի այդ չարագուշակ օրը, Յունանեան անուն դաւադիրը, իր ոճրածին վոհմակի մը գլուխը անցած, անվտանգ, անարգել եւ սահուն՝ մուտք գործեց Ազգային Ժողովէն ներս, արեան ճապաղիքի մէջ զգետնելով հոյլ մը հայ ազգին եւ հայրենիքին նուիրեալ դէմքեր, գլխաւորութեամբ Ազգային Ժողովի նախագահի, վաստակաշատ Կարէն Տէմիրճեանի եւ Հանրապետութեան նախարարաց խորհուրդի պետ՝ ազգային հերոս Վազգէն Սարգիսեանի՝ որոնք հայրենիքի պայծառ գալիքի վրայ բացուող լուսաշող ապագայի կերտման գրաւականներէն էին:

Ինչպէ՞ս կը բացատրուի այն՝ որ այսօր տասներորդ տարին բոլորելով, Հոկտեմբեր 27-ի՝ համազգայնօրէն դատապարտուած, եւ իշխանութիւններու կողմէ լռութեամբ դիմագրաւուած այդ ճաղաճական ստորին ոճրի բացայայտման պահանջատիրութիւնը նենգօրէն կ'անտեսուին մինչեւ օրս: Այդ անտեսումը առաւել եւս կը բացայայտէ շրջանաւարտ, ապօրէն նախագահ Ռոպէր Քոչարեանի եւ այդ օրերու պաշտպանութեան եւ ապահովութեան նախարար ու ներկայի գործող, Քոչարեանի ճակատագրակից նախագահ՝ Սերժ Սարգիսեանի մեղսակցութիւնը:

Տարակոյս չկայ, որ այս եղբայրասպան ոճիրը նիւթողներ՝ Քոչարեան, անոր մեղսակից Սերժ Սարգիսեան, ոճիրը գործողներն ու անոնց ետին կանգնած օրինազանց սահմանադրական գրասենեակները, ոճիր գործելու սիրոյն չէր որ գործեցին ոճիրը 1999 Հոկտեմբեր 27-ին, հայրենի Ազգային Ժողովէն ներս: Անոնք, իշխանութեան տիրանալու առաջին իսկ օրէն սկսեր էին նիւթելու, որոնալու մեր ներկայ օրերուն իրենց պայթեցնելիք

*Շար.ը էջ 19*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱՒ «ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի» ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

### «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄՆԱԼՈՒ Է ՈՐՊԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԻ ԱՄՕԹԱԼԻ ԽԱՐԱՆ».- ԸՍՈՒԱԾ Է ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԻՆ

*1999-ի Հոկտեմբեր 27-ին Նաիրի Յունանեանի գլխաւորած զինեալ ահաբեկչական խումբը, ներխուժելով Հայաստանի խորհրդարանի նիստերու դահլիճ, գնդակահարեց 8 պետական գործիչներու: Ահաբեկչութեան զոհ գացին Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեան եւ վարչապետ Վազգէն Սարգսեան, խորհրդարանի փոխնախագահներ Եուրի Բախշեան եւ Ռուբէն Միրոեան, պատգամաւորներ Միքայէլ Քոթանեան, Հենրիկ Աբրահամեան, Արմենակ Արմենակեան եւ նախարար Լեոնարտ Պետրոսեան:*

*Երեքշաբթի օր, Հայաստանի մէջ նշուեցաւ ողբերգական այդ թուականի տասնամեակը ու այս առթիւ իշխանութեան ներկայացուցիչները Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ, եւ ընդդիմութիւնը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ առանցին-առանցին այցելեցին Եռաբլուր ու Կոմիտասի անուան պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու ոճրագործութեան զոհերու յիշատակին:*

*Առաւօտեան Սերժ Սարգսեան այցելեց Եռաբլուր, ուր ծաղիկներ դրաւ Հոկտեմբեր 27-ին սպանուած վարչապետ Վազգէն Սարգսեանի շիրիմին: Ան մերժեց պատասխանել լրագրողներու հարցերուն՝ յայտնելով, որ հարցերու պատասխանելու օրը չէ:*

*Եռաբլուրէն Սերժ Սարգսեան ուղղուեցաւ Ազգային ժողով, որու*



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Վազգէն Սարգսեանի մայրը՝ Տիկ. Կրեթան կ'ողջագուրուին Եռաբլուրի մէջ

*այգիէն ներս տեղի ունեցաւ «Հոկտեմբերի 27-ի» զոհերու յիշատակը յաւերժացնող յուշակոթողի բացման արարողութիւնը:*

*Այս արարողութեան «Հոկտեմբերի 27-ի» զոհերու հարազատներէն ներկայ էին Վազգէն Սարգսեանի ծնողները, Կարէն Դեմիրճեանի որդին եւ այրին, Եուրի Բախշեանի եւ միւս զոհերու կանայք:*

*Եուրի Բախշեանի այրին, Անահիտ Բախշեան, «Ազատութիւն» ռատիոկայանի հետ իր ունեցած զրոյցի ընթացքին զարմանք յայտնեց յուշակոթողը Ազգային Ժողովի ցանկապատէն ներս կանգնեցնելու կապակցութեամբ:*

*«Լաւ կը լինէր, որ հասարակութեանը հասու լինէր: Բայց բերեցին այստեղ, որովհետեւ կայ մեղքի զգացում, որը թոյլ չի տալիս ամբողջ հասարակութեանը յստակօրէն*

*Շար.ը էջ 4*

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՌՆԱՐԱՐՔՆԵՐ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

*Հոկտեմբերի 26-ին, Նիկոլ Փաշինեանի դատավարութեան ընթացքին դատարանի շուրջ հաւաքուած խաղաղ ցուցարարներու նկատմամբ ոստիկանութիւնը գործադրած է բռնարարքներ: Սադրանք կազմակերպելով, անոնք յարձակած են հաւաքուած ժողովուրդի վրայ, քաշքշել, ծեծել, ապա զանոնք դուրս քշած են դատարանի բակէն: Երկու երիտասարդներ՝ Սարգիս Խաչատրեան եւ Սարգիս Գէորգեան տարուած են ոստիկանութիւն, սակայն հետագային ազատ արձակուած են: Մէկ կին մարմնական վնասուածքներով տեղափոխուած է հիւանդանոց:*

*«Հայ Ազգային Գոնկրէսը կը դատապարտում է ոստիկանական վայրագութիւնները եւ հաւաստիացնում, որ նմանօրինակ դէպքերը ամենեւին չեն ազդելու մեր վճռականութեան վրայ, ընդհակառակը՝ բազմապատկելու են մեր շարքերը*

*Շար.ը էջ 5*

## ՋՕ ՊԱՅՏԸՆ. «ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՒԵԼԻ ԵՆ, ՔԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ«

*«Ազատ Եւրոպա-Ազատութիւն» ռատիոկայանին հետ իր ունեցած հարցազրոյցի ընթացքին Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճօ Պայտըն յայտնած է որ, Հարաւային Կովկասի ժողովուրդները սկսած են հասկնալ, որ իրենց սեփական շահը առաւել ընդարձակ համագործակցութեան մէջ է:*



Միացեալ Նահանգներու փոխնախա-գահ Ճօ Պայտըն

*«Մեծ ազգերն ու մեծ դաշինքները կ'օգտուին փոփոխութիւններու ընձեռած առաւելութիւններէն եւ զանոնք կը դարձնեն հնարաւորութիւններ: Ես կ'ողջունեմ պետական քարտուղար Քլինթընի ջանքերը. դուք տեսաք՝ ինչ կատարուեցաւ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, դուք կը տեսնէք ինչ կը կատարուի այժմ միւս՝ երկարատեւ եւ լուծում չստացած խնդիրներուն մէջ».- ըսած է Պայտըն:*

*Կարծիք յայտնելով, որ տարածաշրջանի երկրները սկսած են հասկնալ, որ ընդարձակ համագործակցութիւնը կը բխի իրենց սեփական շահերէն՝ Ճօ Պայտըն ըսած է. - «Այդ համագործակցութեան դրդողը ոչ թէ սէրն է, այլ անհրաժեշտութիւնն ու կարիքը»:*

*«Շատ բարդ ժամանակաշրջան կը սպասուի, որ վտանգներ կը պարունակէ, սակայն, ես կը պնդէի, որ հնարաւորութիւնները աւելի են, քան վտանգները: Ես առաւել դրական, քան բացասական զարգացումներ կը տեսնեմ, սակայն այս ամէնը հմտութիւններ եւ աւելի շատ յաջողութիւն կը պահանջէ: Այնպէս որ, մենք կ'աշխատինք մեր բարեկամներու հետ Թուրքիայի, Եւրոպայի, Կենտրոնական Եւրոպայի եւ Կովկասի երկրներու, որոնք իսկական փոփոխութիւններու առջեւ կանգնած են», - ասել է ԱՄՆ-ի փոխնախագահը:*

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

## ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՀԵՏ ՖՈՒԹՊՈԼԱՅԻՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

*Գ. ԽՈՏԱՆԵԱՆ*

*Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ սկսած՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ «ֆութպոլային դիւանագիտութեան» մասին տակաւին երկար պիտի խօսուի ու գրուի: Սակայն շօշափելի արդիւնքներու մասին արդէն իսկ ականատես կ՛ըլլանք օրըստօրէ, յատկապէս որ անոնք կու գան անմիջականօրէն հարուածելու Հայաստանի ու հայութեան աշխարհաքաղաքական շահերուն:*

*Միջազգային լրատուամիջոցները կը հաղորդեն թէ, մի քանի օր առաջ Աւստրիոյ մայրաքաղաք Վիէննայի մէջ տեղի ունեցած է Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան հովանիին տակ գործող ու ղարաբաղեան հարցի գծով երկար տարիներէ միջնորդական աշխատանքներ տանող Մինսկի Խումբի համանախագահներու հերթական հանդիպումը, որուն առաջին անգամ ըլլալով մասնակցած է նաեւ Թուրքիոյ ներկայացուցիչը՝ արտաքին գործոց փոխնախարարի մակարդակով:*

*Այսպիսով, երկիր մը, որ բացայայտ կողմ է հայ-ատրպէյճանական հակամարտութեան մէջ եւ որու արտաքին գործոց նախարարը կը յայտարարէ ըսելով թէ, «Ատրպէյճանի հողերը մեզի համար նոյնքան սուրբ են որքան թրքական հողերը», կ՛ընդգրկուի միջնորդական առաքելութեան մէջ:*

*Այս իրողութիւնը անմիջական հետեւանք է Հայաստանի փաստացի ղեկավարի անզգոյշ ու անհեռատես քայլերուն, որոնք արդէն իսկ կու գան հարուածելու մեր ազգային անվտանգութեան, որու գլխաւոր օղակներէն մին կը հանդիսանայ Արցախն ու անոր պաշտպանութիւնը:*

*2008-ի Սեպտեմբերին, երբ Թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Գիւլ այցելեց Երեւան ներկայ գտնուելու Հայաստան-Թուրքիա ֆութպոլի առաջին խաղին ու այդ առթիւ յայտարարեց թէ, իր երկիրը պատրաստ է միջնորդի դեր ստանձնելու Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ, Սերժ Սարգսեան անմիջապէս ողջունեց իր հիւրի այս խօսքերը, պատուհան բանալով թրքական միջամտութեան առջեւ:*

*Գաղտնիք չէ, որ վերջին մի քանի տարիներուն Թուրք դիւանագիտութիւնը կ՛արձանագրէ սրընթաց յաջողութիւններ: Ներկայիս Թուրքիա դարձած է տարածաշրջանային հզօր պետութիւն, որ իր ազդեցութիւնը սկսած է տարածել արաբական աշխարհի վրայ, ուր երկար տասնամեակներ վերապահութիւն եւ անվստահութիւն գոյութիւն ունէր իր նկատմամբ: Թուրքիա հանդէս կու գայ միջնորդի դերով ոչ միայն Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ, այլ նաեւ միջին արեւելքի բազմաթիւ այլ տաք կէտերուն մէջ:*

*«Ֆութպոլային դիւանագիտութեան» շնորհիւ, Թուրքիա կը յաջողի ներթափանցել նաեւ դէպի Կովկաս, չէզոքացնելէ ետք Հայաստանի գործօնը, որ մինչեւ օրս իր դէմ ցցուող միակ արգելքն կը հանդիսանար:*

*Ներկայացուած առիթները լաւագոյնս օգտագործելու ատակ թուրք դիւանագիտութիւնը, վերջերս ստորագրուած երկու Արձանագրութիւններուն ընդմէջէն, ոչ միայն կը հետապնդէ Հայաստանի հետ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատելու հարցը, այլ առաջին հերթին կը փորձէ հասնիլ դէպի Ատրպէյճան անխափան ճանապարհ ունենալու իր նպատակին, որուն կը ձգտէր Խորհրդային միութեան տապալումէն ասդին:*

*Հայաստանի ղեկավարները որքան ալ որ մերժեն ընդունիլ, սակայն փաստը կը մնայ փաստ, որ Հայ թրքական յարաբերութիւններու նման եղանակով զարգացումը տեղի կ՛ունենայ ի վնաս Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի շահերուն:*

*Ասոր ցայտուն օրինակներէն մին կը հանդիսանայ Միջազգային Ճգնաժամային Խումբի եւրոպական ծրագրի ղեկավար Սաբինա Ֆրէյզըրի այն յայտարարութիւնը, թէ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու նորմալացումը Հայաստանը կը մղէ Ատրպէյճանի հետ բանակցութիւններու ընթացքին առաւել ճկուն դիրք բռնելու:*

*Իր միտքը զարգացնելով Ֆրէյզըր ըսած է թէ, Հայաստան «գրաւուած տարածքներու» վերահսկողութիւնը պահելու փաստարկ կը ներկայացնէր այն, որ կը գտնուի մեկուսացուած վիճակի մէջ, եւ այդ տարածքներու կարիքն ունի որպէս սեփական պաշտպանութեան ապահովութիւն: Հետեւաբար, Թուրքիոյ հետ սահմանի բացման պարագային Հայաստան չի կրնար այլեւս օգտագործել այդ մօտեցումը, քանի որ Հայերը ելք կ՛ունենան դէպի աշխարհ:*

*Միջազգային կազմակերպութիւններու եւ արեւմտեան պետութիւններու տեսակէտները արտայայտող Ճգնաժամային Խումբը այսպիսով ըսել կ՛ուզէ թէ, Հայաստան այսուհետեւ չի կրնար թրքական շրջափակումը որպէս «պատրուակ» օգտագործել եւ պարտաւոր է 7 շրջանները յանձնել Ատրպէյճանին:*

*«Ֆութպոլային դիւանագիտութեան» շնորհիւ Հայաստան մխրճուեցաւ ոչ հայանպաստ գործընթացներու մէջ, իսկ Թուրքիա, քայլ առ քայլ կը յաջողի հասնիլ իր բոլոր ծրագիրներու իրականացման:*

*Հայաստանեան «7օր» կայքէջին վրայ զետեղուած մէկ ծաղրանկարը, բաւական խօսուն է այս առումով: Սերժ Սարգսեանի եւ Հիլըրի Քլինթընի միջեւ տեղի կ՛ունենայ հեռաձայնային խօսակցութիւն, որու ընթացքին Սարգսեան կ՛ըսէ «էս թուրքերը մեզ գցում են», որուն Տիկ. Քլինթըն կը պատասխանէ.-«էդ մասին պէտք էր ֆութպոլ խաղալուց առաջ մտածել: Պայ-Պայ...»:*

*Այժմու դրութեամբ, Հայաստանի Իշխանութիւններուն առջեւ գտնուող բոլոր ելքերն ալ կ՛առաջնորդեն դէպի փակուղի, որմէ դժուար թէ անոնք կարողանան դուրս գալ, առանց հրաժարական ներկայացնելու, բան մը որու համար պէտք եղած քաջութիւնը չունին տակաւին:*

## ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Հակառակ անոր որ Օգոստոս 31, 2009-ին յայտարարուած հայ-թրքական ծանօթ Արձանագրութիւններու վրայէն անցած են գրեթէ 2 ամիսներ, սակայն եւ այնպէս այդ առթիւ բարձրացած փոթորիկը տակաւին չէ հանդչած ու կը շարունակէ պղտորել շատերու տեսողութիւնը: Պատճառները պէտք է փնտռել մասամբ անոնց մօտ, որոնց հաշւոյն կու գայ նման պղտոր իրավիճակի շարունակութիւնը, եւ մասամբ ալ ցորենը յարդէն զատելու ներազգային գործընթացներու տկարութեան վրայ:*

*Այս յօդուածի նպատակը բարձրացնելն է որոշ հարցադրումներ, որոնց պատասխաններու որոնումը կրնայ նպաստել իրավիճակի յստակեցման ընթացքին եւ ճիշդ քայլերու որդեգրման, որոնք մեզ դուրս կրնան հանել այս անելային կացութենէն:*

### Ներքին Ազդակներ

*- Ինչպիսի՞ արդիւնաւէտ հասարակական քննարկումներ կարելի է կայացնել, երբ Հայաստանի բոլոր հեռուստակայաններն ալ կ՛ենթարկուին նախագահական պալատի հրամանին:*

*- Արդեօ՞ք Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայէն ներս եւ կամ մեր 50 կուսակցութիւններու հետ սարքուած դռնփակ խորհրդակցական նիստերը հասարակական քննարկում կարելի՞ է նկատել:*

*- Երբ մարդիկ կը հետապնդուին ու կը բանտարկուին իրենց քաղաքական հայեացքներուն համար, արդեօ՞ք այդպիսի մթնոլորտի մէջ կարելի է արդիւնաւէտ հասարակական քննարկում կայացնել:*

*- Տրամաբանակա՞ն է, որ աւելի քան 10 տարիներէ ի վեր Հայաստանի իշխանութեանց բոլոր կեղծիքներուն, անիրաւութեանց ու սահմանադրական խախտումներուն աչք փակած ու անոնցմէ օգտուած ուժերը (օրինակ, ՀՅԴ, Օրինաց Երկիր ու Բարգաւաճ Հայաստան) կարենան յանկարծ հանդէս գալ յանուն արդարութեան եւ օրինականութեան:*

*Արդեօ՞ք Սահմանադրական Դատարանը ի վիճակի է քննարկել այս Արձանագրութեանց սահմանադրականութիւնը եւ գալ անաչառ որոշումի, երբ Սերժ Սարգսեան, Սփիւռքեան իր շրջապտոյտի ընթացքին, իր հետ քարշ կու տար Դատարանի նախագահ՝ Գագիկ Յարութիւնեանին:*

*- Եթէ Հայաստանի մէջ ունենայինք ժողովուրդի վստահութիւնը վայելող իշխանութիւններ, արդեօ՞ք ստիպուած պիտի ըլլայինք ընդունիլ մեր վրայ պարտադրուող այս Արձանագրութիւնները:*

*- Եթէ այս Արձանագրութիւնները, ըստ Էդուարդ Նալպանտեանի եւ Սերժ Սարգսեանի յայտարարութեանց, «ոչ մի փոփոխութեան ենթակայ չէին, ուրեմն ի՞նչ հարկ կար անոնց «քննարկման՝ բեմադրութեանց:*

*- Կարելի՞ է հաւատք ընծայել Սերժ Սարգսեանի այն յայտարարութեան թէ կը կարեւորէ Սփիւռքի կարծիքը, երբ բանտերու մէջ կը պահէ Արցախեան ազատամարտին իրենց կեանքը վտանգած սփիւռքահայեր, որոնք չեն բաժներ իր քաղաքական հայեացքները.*

### Արտաքին Ազդակներ

*- 1993-ին Թուրքիան Հայաստանի հետ սահմանը փակեց որպէս հակազդեցութիւն Արցախեան ճակատի վրայ հայկական ուժերու յաղթանակներուն: Տրամաբանակա՞ն է, որ սահմանը վերաբանայ, անտեսելով Արցախեան ճակատի իրավիճակը:*

*- Որքանո՞վ տրամաբանական է «իրականացնել պատմական փաստաթղթերի եւ արխիւների գիտական, անկողմնակալ ուսումնասիրութիւն» հայ-թրքական պատմաբաններու յանձնաժողովին մէջ երբ թրքական քրէական Օրէնսդրութեան թիւ 301 յօդուածով բանտարկութեան կ՛ենթարկուին հայկական Ցեղասպանութեան ի նպաստ արտայայտուողները:*

*- Եթէ այս Արձանագրութիւնները կը վերաբերին միայն հայ-թրքական յարաբերութեանց բարելաւման, ինչպէ՞ս բացատրել ԱՄՆ-ի Ռուսիոյ, Ֆրանսայի, Եւրոպական Միութեան, Զուիցերիոյ արտաքին գործոց նախարարներու ներկայութիւնը եւ վերահսկողութիւնը ստորագրման արարողութեանց:*

*- Ի՞նչ կապ ունի այս տարուան ընթացքին, Արեւմտեան, Ռուսական, եւ Ասիական աղբիւրներէ Հայաստանի տրամադրուող աւելի քան 1.8 միլիառ տոլարի յատկացումները Արձանագրութեանց եւ Արցախենա հարցի հետ: Յստակեցնենք որ այս գումարը կը գե-*

*Շար.ը էջ 19*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

## ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ.-«ՉԼԻՆԷՐ 27-Ը՝ Կ'ՈՒՆԵՆԱՅԻՆՔ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՅԼ ԵՐԿԻՐ»

*«Ա1+»: «Եթէ չլինէր 27-ի ոճրագործութիւնը՝ մենք այսօր կ'ապրէինք միանգամայն այլ երկրում, կը լինէր լրիւ ուրիշ բարոյահոգեբանական մթնոլորտ, չէր լինի անպատժելիութիւնն ու ամենաթողութիւնը»,- Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնից 10 տարի անց «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը, որը գտնում է, որ իշխանութիւնների կողմից ոչինչ չարուեց ոճրագործութիւնը կանխելու, սակայն ամէն ինչ արուեց այն կոծկելու համար:*

*«Այս իշխանութեան օրօք ամբողջական բացայայտում սպասել չի կարելի, սակայն վաղ, թէ ուշ իրականութիւնը բացայայտուելու է: Դա մեր պետութեան արժանապատուութեան հարցն է: Միայն ամբողջական բացայայտմամբ կը յաղթահարենք Հոկտեմբերի 27-ի բացասական հետեւանքները».- ասաց Ստեփան Դեմիրճեանը:*

*Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնն, ըստ նրա, ծանրագոյն յանցագործութիւն էր ուղղուած պետութեան եւ ժողովրդի դէմ եւ դրա ամբողջական բացայայտումը պետութեան կարեւորագոյն խնդիրը պէտք է լինի:*

*Ինչ վերաբերում է Կարէն Դեմիրճեանի արձանին, որը չնայած որոշմանը, այդպէս էլ չի տեղադրւում, Ստեփան Դեմիրճեանն ասաց. «Եթէ իշխանութիւնը ցանկութիւն ունենար, արձանը վաղուց կանգնած կը լինէր. այն, որ 10 տարի է որոշումը կայ, սակայն հարցը լուծուած չէ, այս պետութեան ամօթն է»:*



**ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեան**

*Յիշեցնենք, որ դեռ 1999 թուականի Դեկտեմբերին որոշում էր կայացուել, իսկ 2007 թուականին՝ Կարէն Դեմիրճեանի 75 ամեակի կապակցութեամբ, կառավարութեան որոշում ընդունուեց արձան տեղադրելու մասին, ապա քաղաքապետարանը մրցոյթ յայտարարեց, որում որեւէ մէկը յաղթող չճանաչուեց:*

*«Չէի ասի, թէ համապատասխան հրապարակայնութիւն ապահովուած էր մրցոյթում, բայց փաստ է, որ առ այսօր հարցը լուծուած չէ»,-ասաց նա:*

*Իսկ ընդհանրապէս, Ստեփան Դեմիրճեանը գտնում է, որ Հոկտեմբերի 27-ի զոհերի յիշատակը պէտք է յարգուի գործերով, երկիրը հզօրացնելով, պետականութիւնը ամրապնդելով եւ իհարկէ ոճրագործութեան ամբողջական բացայայտմամբ:*

## «ՎԱԽԻ ՄԹՆՈԼՈՐՏԸ«, ԸՍՏ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՈՒՄ ՉԻ ՆՈՒԱԶՈՒՄ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հոկտեմբերի 26-ին Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը խորհրդարանում ներկայացրել է 2008 թուականի տարեկան զեկոյցը՝ համաձայն որի նախորդ տարուայ ընթացքում օմբուդսմենը 4000-ից աւելի դիմում-բողոքներ է ստացել:*

*Զեկոյցում բերուած փաստերը ցոյց են տալիս, որ Հայաստանի քաղաքացիները ամենաշատը բողոքում են ոստիկանութիւնից, դատարաններից, Երեւանի քաղաքապետարանից:*

*Նախագահական ընտրութիւնների օրը պաշտպանը բողոքներ է ստացել վստահուած անձին ծեծելու, տեղամասերում լցոնումներ կատարելու, ուրիշի փոխարէն քուէարկելու, ընտրողներին քուէարկելու համար թիւ 9 ձեւի տեղեկանքներ տրամադրելու, նրանց միկրոաւտոբուսներով ընտրական տեղամասեր տանելու եւ այլ խախտումների մասին:*

*Մարտի 1-ի դէպքերից յետոյ պաշտպանը բողոքներ է ստացել մեղադրեալներին անհիմն կամ քաղաքական ենթատեքստ ունեցող մեղադրանքներ ներկայացնելու, ոստիկանութիւնում մարդկանց ապօրինի պահելու, ձերբակալման կարգն ու ժամկէտները խախտելու մասին:*

*Աւելի քան 250 էջանոց զեկոյցում օմբուդսմենը, մասնաւորապէս, նշում է.- «Իրավիճակի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ ռեպրեսիւ համակարգի գոյութեան հետեւանքով վախի մթնոլորտը մեր հասարակութիւնում չի նուազում»:*



**Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեան**

*Օմբուդսմենը մտահոգիչ է համարում «2008-ի ընթացքում վարչական ապարատի դրսեւորած միակողմանիութիւնը, որը արտայայտուեցուել Մարտի 1-20-ը ընկած ժամանակահատուածում՝ արտակարգ դրութեան ժամանակ, ինչի հետեւանքով 20 օր հնչում էր միայն իշխանութեան տեսակէտը»:*

*Խորհրդարանում, ի դէպ, պաշտպանի տարեկան զեկոյցի քննարկմանը մասնակցում էին ընդամէնը մի քանի պատգամաւորներ: Վիկտոր Դալլաքեանն իր ելոյթում պարզաբանեց պատգամաւորների նման վերաբերմունքի պատճառը՝ ասելով. - «Դահլիճի ներկայութիւնը ինչ-որ առումով ցոյց է տալիս, որ ՀՀ-ում մարդու իրաւունքների պաշտպանութիւնը գտնւում է տխուր վիճակում»:*

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ. «ՀԱԿ-Ը ՋԱՏԱԳՈՎ Է ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ, ՈՉ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ, ԲԱՅՑ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՎ»

*Վազգէն Սարգսեանի յիշատակին յարգանքի տուրք մատուցելու համար Եւրոպայից եկած ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեանը «7օր»-ի հետ զրոյցում կարծիք է յայտնել, որ «արտահերթ ընտրութիւնների ռէալ հնարաւորութիւն կը լինի, երբ ճշմարտութիւնների բացման շարքին աւելանայ Ղարաբաղի հարցի գործօնը հայ-թուրքական յարաբերութիւններում»: Նրա կարծիքով, «եթէ ժողովուրդը համոզուեց, որ իսկապէս Ղարաբաղը, մասնաւորապէս Ղարաբաղից հայկական զօրքերի դուրս հանումը հայ-թուրքական յարաբերութիւնների ենթատեքստում է, եւ մեծերի ու միջազգային կազմակերպութիւնների միջեւ եղած պայմանաւորուածութիւնների կամ ճնշման արդիւնք, այդ ժամանակ ռէալ կ'առաջանայ նման իրավիճակ»:*

*«Ճի՞շդ էք համարում 1998թ. իշխանափոխութիւնը, ի դէմս Վազգէն Սարգսեանի եւ իր թիմի», հարցին Արամ Մանուկեանը հրաժարուել է պատասխանել, ասելով, որ Հոկտեմբերի 27-ին նման հարցի պատասխանել չի ցանկանում: Այնուամենայնիւ, նա նշել է, որ ինքն ընդհանրապէս որեւէ յեղաշրջում ճիշդ չի համարում, քանի որ աշխարհում կայ քաղաքակրթութեան կողմից հիմնած իշխանափոխութեան մի ձեւ, ընտրութիւնները»:*

*ՀԱԿ-ը ջատագով է արտահերթ ընտրութիւնների, ոչ յեղափոխական ճանապարհով, բայց հրաժարականի առաջարկով, որովհետեւ որքան էլ ուշ, բայց նորից անարժանապատիւ փաստաթղթերից խուսափելու միակ ճանապարհը հրաժարականն է: Մեր պատմութիւնը չունի նման դէպք, երբ ոչ ֆորսմաժորային իրավիճակում մենք այսպիսի փաստաթուղթ ենք ստորագրում: Չկայ այդպիսի դէպք: Մեր բոլոր փաստաթղթերն ինչ-որ կերպ իրավիճակի արձագանք են եղել: Հիմա այդ իրավիճակը չէր, որ Հայաստանը գնար նման գիջումների: Ընդամէնը մէկ-երկու հոգու իշխանակառչութեան արդիւնքում է, որ մենք այսքան կորուստներ ենք տալիս: Եթէ իշխանութիւնը կամ ժողովուրդն ուզում է, որ այդ փաստաթղթերն ուժ չստանան, ապա հրաժարականը փրկութիւն է»-, ըսած է ՀԱԿ-ի անդամը:*



**ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ «ԽՈՐԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ» Է

*«Եթէ դեմոգրաֆիական այս պատկերը ու դինամիկան պահպանուեն, ապա 2020-30 թուականներից Հայաստանում աշխատողների ու կենսաթոշակ ստացողների յարաբերակցութիւնը կը լինի խորը ողբերգական կամ խորը կործանարար», -Հոկտեմբեր 26-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Հայաստանի Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան պետ Վազգէն Խաչիկեանը: Նրա խօսքով, ներկայիս իրավիճակը նոյնպէս պակաս մտահոգիչ չէ, ինչը բնութագրեց որպէս «խորը ճգնաժամային»:*

*«Արեւելեան Եւրոպայի եւ կենտրոնական Ասիայի երկրների հետ համեմատած՝ մենք ունենք ամենից վատ դեմոգրաֆիական պատկերը՝ կապուած աշխատող քաղաքացիների եւ կենսաթոշակառուների յարաբերակցութեան հետ», - նշեց Խաչիկեանը:*

*Վազգէն Խաչիկեանի ներկայացմամբ, «պտղաբերութեան գործակիցը» Հայաստանում շարունակում է բաւական ցածր մնալ: Յայտնի է, որ հասարակութեան վերարտադրութեան համար հարկաւոր է, որ մէկ զոյգին բաժին ընկնող երեխաների քանակը լինի առնուազն 2.1, որպէսզի տուեալ ժողովրդի քանակը առնուազն մնայ նոյնը:*

*«ՀՀ-ում 2008-ի ամփոփուած տուեալներով, մենք ունենք 1,45 գործակից» - ասաց Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան պետը՝ յաւելելով, որ «բացարձակ թուերի առումով առաջիկայում ծնելիութիւնը Հայաստանում դարձեալ անկում կապրի, քանի որ այժմ ծննդաբերողների մեծ մասը գերազանցապէս ծնուել են 1980-85 թուականներին, իսկ եթէ հաշուի առնենք, որ 1989-ից յետոյ ծնուածների թիւը Հայաստանում անկում է ապրել 2-3 անգամ, ապա առաջիկայում կը կրճատուի նաեւ ծնուող երեխաների թիւը»:*



**Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան պետ Վազգէն Խաչիկեան**

*Վազգէն Խաչիկեանը բերեց կոնկրետ թուեր. - «1995 թուականին ունեցել ենք 42 հազար ծնունդ՝ 1989 թուականի 81 հազարի դիմաց: Դրանից յետոյ աւելի յաջորդական սկսել է վատանալ, մենք ունեցել ենք նոյնիսկ տարիներ, երբ 25-26 հազար երեխայ է ծնուել»: «Սրան պէտք է գումարենք նաեւ ակտիւ միգրացիոն հոսքերը», - աւելացրեց Խաչիկեանը:*

**ԼՈՒՐԵՐ**

## ԸՍՏ ՄԱԿ-Ի ԶԵԿՈՅՑԻ, ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 84-ՐԴՆ Է 182 ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ



*ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի անդամները կը ներկայացնեն իրենց զեկոյցը*

*Հայաստանի համար սահմանուած Մարդկային զարգացման համաթիւը (ՄԶՀ) 0.798 է: Բնակչութեան բարեկեցութեան մակարդակն արտայայտող այս ցուցանիշով Հայաստանը 84-րդն է աշխարհի 182 երկրների շարքում: Այս մասին Հոկտեմբեր 27-ին յայտարարեց ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի մշտական համակարգող եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) մշտական ներկայացուցիչ Կոնսուէլօ Վիդալը:*

*Հայաստանի Մարդկային զարգացման համաթիւը աճել է նախորդ ցուցանիշի համեմատութեամբ: Այժմ Հայաստանն առաջին տեղում է «Միջին մարդկային զարգացում» ունեցող երկրների շարքում, նրան յաջորդում են Ուկրաինան եւ Ադրբեջանը: Իրանը եւ Վրաստանը համապատասխանաբար զբաղեցնում են 88-րդ եւ 89-րդ տեղերը, իսկ Ռուսաստանն ու Թուրքիան՝ համապատասխանաբար 71-րդ եւ 79-րդ տեղերը: ՄԶՀ ամենաբարձր ցուցանիշներով երկրներն են Նորվեգիան, Աւստրալիան եւ Իսլանդիան: Ամենացածր ցուցանիշներով ցուցակը եզրափակում են Նիգերիան, Աֆղանստանը եւ Սիերա Լէոնեն:*

*«Միգրանտների 75 տոկոսը ընտրում է այնպիսի երկիր, որտեղ ՄԶՀ-ն աւելի բարձր է, քան իր սեփական երկրում», - փաստում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Մարդկային զարգացման 2009-ի զեկոյցը, որը վերնագրուած է «Յաղթահարելով խոչընդոտները. մարդկային շարժ եւ զարգացում», այն նուիրուած է մարդկանց տեղաշարժերին եւ միգրացիոն հիմնախնդիրներին:*

*«Մարդկանց տեղաշարժերի մասշտաբներն այսօր այնքան են աճել, որ լուծումներ են պահանջւում ոչ թէ լոկալ կամ տարածաշրջանային, այլ նաեւ գլոբալ մասշտաբով ու մակարդակով», - իր ելոյթում նշեց Հայաստանի տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչէ Տէրտէրեանը:*

*«Հայաստանին բնորոշ են արտաքին միգրացիոն հոսքերը, յատկապէս էմիգրացիոն հոսքերը», - նշեց Միգրացիոն գործակալութեան պետի տեղակալ Իրինա Դաւթեանը, ում փոխանցմամբ, նախորդ 20 տարուայ ընթացքում Հայաստանից արտագաղթել է 1 միլիոն մարդ, նրանց մեծ մասը՝ Ռուսաստան, 9 տոկոսը՝ ԱՊՀ այլ երկրներ, 15 տոկոսը՝ Եւրոպա եւ 10 տոկոսը՝ ԱՄՆ:*

*Զեկոյցը փաստում է, որ Հայաստանում միգրացիայի հիմնական դրդապատճառը տնտեսականն է: «Իւրաքանչիւր 3 էմիգրանտից 2-ը որպէս Հայաստանից մեկնելու դրդապատճառ նշում է աշխատանքի, աշխատատեղերի բացակայութիւնը», - ասաց Իրինա Դաւթեանը:*




**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ**

## JANES. «ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԿԱՍԵՑՆԵԼ ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Jane's Intelligence Weekly-ն հրապարակել է նոր վերլուծութիւն հայ - թուրքական եւ հայ - ադրբեջանական յարաբերութիւնների մասին:*

*Հեղինակաւոր վերլուծական կենտրոնի փորձագէտները նշում են, որ Ադրբեջանը սպառնում է կասեցնել հայ - թուրքական մերձեցումը եւ ակնարկում է, թէ պատրաստ է բնական գազն արտահանել՝ շրջանցելով Թուրքիայի տարածքը: Բացի այդ, պաշտօնական Բաքուն նկատել է տալիս, որ կարող է դադարեցնել սուբսիդաւորուած գներով գազի վաճառքը Թուրքիային:*

*«Թուրքիան ակնարկել է, որ քանի դեռ կարգաւորուած չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, Հայաստանի հետ յարաբերութիւնների լիակատար բարելաւում չի լինի, բայց չնայած այդ հաւաստիացումներին՝ Ադրբեջանը, միեւնոյն է, մտահոգուած է, քանզի բարելաւման գործընթացն արդէն սկսուել է», - նշել են Jane's Intelligence Weekly-ի վերլուծաբանները եւ յաւելել.- «Եթէ Հայաստանի հանդէպ պատժամիջոցը (սահմանի փակումը) վերացուի, դա հուժկու հարուած կը հասցնի Հայաստանը մեկուսացման մէջ պահելու եւ ճնշման ենթարկելու Ադրբեջանի քաղաքականութեանը»:*

*Jane's Intelligence Weekly-ն այսպիսի եզրակացութեան է յանգում. - «Հայ - թուրքական մերձեցման հանդէպ Ադրբեջանի դժգոհութեան հետեւանքով թուրք - ադրբեջանական յարաբերութիւններում ի յայտ եկած լարուածութիւնը կարող է աճել եւ աւելի բարդացնել առանց այն էլ դժուար ընթացող Ղարաբաղեան բանակցութիւնները»:*

*«Եթէ այս տարաձայնութիւնները պահպանուեն, Ադրբեջանի համար հնարաւոր ելքերից մէկը կը լինի՝ բացառել Թուրքիան որպէս գազի արտահանման ուղի եւ գոնէ միաժամանակ ուշադրութիւն սեւեռել Ռուսաստանի վրայ, ինչը, իր հերթին, կարող է սպառնալիք դառնալ Nabucco ծրագրի համար», - կարծում են հեղինակաւոր կենտրոնի փորձագէտները:*

## ՆՇՈՒԵՑԱՒ «ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի» ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

*Շարունակուած էջ 1-էն*



*Կարէն Դեմիրճեանի շիրիմը*

*ասել, ո՛չ անհաբեկչութեան: Ոչ մէկի խօսքում չի ասւում, որ սա պետական ահաբեկչութիւն էր», - ըսաւ Անահիտ Բախշեան:*

*Ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի օրուայ երկրորդ կէսին նախ այցելեցին Կոմիտասի անուան քաղաքային պանթէոն, յարգանքի տուրք մատուցելու ահաբեկչութեան զոհը դարձած Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանի շիրիմին:*

*Գոնկրէսի ղեկավար, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան մերժեց լրագրողներու հետ խօսիլ «Հոկտեմբերի 27-ի» մասին, խորհուրդ տալով սերտել եւ բոլոր հարցերու պատասխանները գտնել Գոնկրէսի հրապարակած յայտարարութեան մէջ:*

*Այդ յայտարարութեան մէջ Հայ Ազգային Գոնկրէսը կը յայտնէ որ, «Հոկտեմբերի 27-ը պետական յեղաշրջմամբ իրականացուած իշխանութեան բռնազաւթում էր ահաբեկչութեան ճանապարհով:*

*«Տաս տարի անց դեռ օդում կախուած է փաստաբանների եւ զոհերի հարազատների միաբերան յայտարարութիւնը, «Հոկտեմբերի 27-ը չի բացայայտուի այս իշխանութեան պայմաններում»: Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը մնալու է որպէս հայկական պետականութեան ճակատի ամօթալի խարանը, քանի դեռ չեն բացայայտուել հրէշաւոր այդ մտայղացման հեղինակներն ու պատուիրատուները».- մասնաւորապէս ըսուած է ՀԱԳ-ի յայտարարութեան մէջ: Յայտարարութիւնը ամբողջութեամբ տեսնել էջ 5-ի վրայ:*

*Պանթէոնէն յետոյ ընդդիմութեան ներկայացուցիչները այցելեցին Եռաբլուր՝ վարչապետ Վազգէն Սարգսեանի շիրիմին, ուր դիմաւորուեցան Վազգէն Սարգսեանի ծնողներու կողմէ:*

*Եռաբլուրի մէջ Վազգէն Սարգսեանի եղբայր, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան լրագրողներուն ըսաւ. - «Բոլոր զոհուածների հարազատների համար էլ 10 տարի, 10 օր, թէ 10 ժամ, որեւէ տարբերութիւն չկայ, եւ այս առումով, խնդիրները մնացել են նոյնը: Իրենց բացակայութեամբ այդ խնդիրները լուծելը էլ աւելի է բարդացել, եւ այն, ինչ հնարաւոր էր սրանից 10 տարի առաջ անել, հիմա անհամեմատ աւելի դժուար ու բարդ է դարձել, որովհետեւ կորուած ենք, հոգով ենք կորուած»:*

*Արամ Սարգսեան աւելցուց, թէ «Հոկտեմբեր 27-ի» զոհերու յիշատակը յարգելու լաւագոյն ձեւը, «ոչ թէ յուշարձաններ, արձաններ բացելն է, այլ «Հոկտեմբերի 27-ը» բացայայտելը»:*

*«Աւելին, Վազգէնին յարգող մարդիկ Վազգէնի ընկեր Մուշեղ Սաղաթէլեանին, Սասուն Միքայէլեանին, Ժոռա Սափանեանին, Մուկուչ Սափանեանին հակառակ տեսակէտ ասելու համար բանտերում չէին նստեցնի», - յայտարարեց Վազգէն Սարգսեանի եղբայրը:*

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՍԵՒ ԷՋՆ Է

Հայ Ազգային Կոնգրեսը Հոկտեմբերի 27-ի տարելիցի կապակցութեամբ յայտարարութիւն է տարածել, որում, մասնաւորապէս, ասուած է.

*«Տաս տարի առաջ, 1999թ. Հոկտեմբերի 27-ին Հայաստանում տեղի ունեցաւ իր ցինիզմով աննախադէպ ու սահմռկեցուցիչ մի ոճիր, ինչի նոյնարժէք զուգահեռները դժուար է գտնել ոչ միայն Հայոց, այլեւ համաշխարհային պատմութեան մէջ: Խորհրդարանում նիստի ժամանակ գնդակահարուեցին Ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանը, վարչապետ Վազգէն Սարգսեանը, ԱԺ նախագահի տեղակալներ Ռուբէն Միրոեանը եւ Եուրի Բախշեանը, պատգամաւորներ Հենրիկ Աբրահամեանը, Միքայէլ Քոթանեանը, Արմենակ Արմենակեանը, կառավարութեան անդամ Լեոնարդ Պետրոսեանը:*

*Հոկտեմբերի 27-ը սոսկ անհատների, նշանաւոր քաղաքական-պետական գործիչների, երկրի բարձրագոյն պաշտօնեաների նկատմամբ իրականացուած ահաբեկչութիւն չէ: Ոճիրն ինքնին, առաւել եւս իր հետեւանքներով դարձաւ Հայոց պատմութեան ամենասեւ օրերից մէկը, անկախութեան շրջանի քաղաքական ընթացքի բախտորոշ ջրբաժանը. գնդակահարուեց ժողովրդավարութիւնը, վերացուեց Հայաստանում վերջին ժողովրդավարական ընտրութեան արդիւնքը:*

*Մինչ այդ, «Միասնութիւն» քաղաքական հզօր դաշինքի առկայութեամբ «դիտորդի» կարգավիճակում յայտնուած Ռ. Քոչարեանը, ստիճանաբար տիրապետելով իշխանական լծակներին, ոչ միայն խոչընդոտեց արդար դատավարութեան իրականացմանը, այլեւ իր լիակատար ու բացայայտ պաշտպանութեան տակ վերցրեց մարդասպաններին, նրանց օժանդակողներին, այլ յանցակիցների՝ նախաքննութիւնն ու դատաքննութիւնը վերածելով կատարեալ մի խեղկատակութեան, թոյլ չտուեց կազմակերպիչների մասով իրական որեւէ քննութիւն, կարճել տուեց այդ գործը: Ոճրագործութեան պարտակմանը նպաստեց պատեհապաշտների եւ ուրացողների այն երամը, որ գլխատուած քաղաքական ուժից արագ կողմնորոշուեց դէպի քոչարեանական ճամբար: Առաջին իսկ պահից շատերի մօտ ծնուած կասկածը, թէ հենց ինքը՝ Քոչարեանն է կանգնած ոճրագործութեան թիկունքում, աստիճանաբար վերածուեց հասարակութեան համընդհանուր վերջնական համոզումի: Ընթացքում պարզուեց նաեւ, որ Սերժ Սարգսեանի ղեկավարած գերատեսչութիւնում՝ ԱԱԾ-ում, նախապէս տեղեակ են եղել նախապատրաստուող ահաբեկչութեան մասին եւ ոչինչ չեն արել այն կանխելու համար:*

*Հոկտեմբերի 27-ը պետական յեղաշրջմամբ իրականացուած իշխանութեան բռնազաւթում էր ահաբեկչութեան ճանապարհով: Դրանով ահաբեկչութիւնը, որպէս այդպիսին, դարձաւ վարչախմբի հիմնական գործիքը իշխանութեան հետագայ պահպանման ու վերարտադրման համար՝ ուղղուած ոչ միայն անհատների, այլեւ ողջ հասարա-կութեան դէմ:*

*Հոկտեմբերի 27-ը ոչ թէ աւարտուած ակտ՝ մահափորձ է անհատների, պետական գործիչների դէմ, այլեւ մի շարունա-կական ահաբեկչութիւն-գործընթաց, դաւաճա-նութիւն է հայկական պետականութեան, Հայ-աստանի պետական ան-վտանգութեան նկատ-մամբ եւ առ այսօր շարունակւում է բերել ազգակործան աղէտներ:*

*Բացայայտուած ու դատապարտուած չլինելով՝ Հոկտեմբերի 27-ի հետեւանքները ոչ միայն չեն ամոքւում, այլեւ այդ ոճիրն այսօր էլ շարունակւում է՝ ժամանակի հետ առարկայացող շատ աւելի աղետալի ու ազգակործան դրուագներով, դրանից են ծնուել՝*

*- 2004թ. Ապրիլի 12-ի բարբարոսութիւնը,*

*- Խաղաղ ցուցարարների մարտիմէկեան ջարդը եւ հրէշաւոր սպանդը,*

*- Հայոց ցեղասպանութեան ցիւրիխեան ամօթալի ուրացումը,*

*- Լեռնային Ղարաբաղի՝ կործանման եզրին հասցուած խնդիրը:*

*Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը մնալու է որպէս Հայոց պատմութեան ամենասեւ էջը, եթէ նոյնիսկ ինչ-որ ժամանակ վերացուեն դրա հետեւանքները:*



*Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը մնալու է որպէս հայկական պետականութեան ճակատի ամօթալի խարանը, քանի դեռ չեն բացայայտուել հրէշաւոր այդ մտայղացման հեղինակներն ու պատուիրատուները:*

*Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը մնալու է որպէս հայկական պետութեան հիմքերը քայքայող հիմնական գործօնը, քանի դեռ բոլոր մեղաւորները չեն կրել իրենց արժանի պատիժը:*

*Տաս տարի անց դեռ օդում կախուած են փաստաբանների եւ զոհերի հարազատների միաբերան յայտարարութիւնը՝ «Հոկտեմբերի 27-ը չի բացայայտուի այս իշխանութեան պայմաններում»: Ուստի եւ Հոկտեմբերի 27-ի զոհերի յիշատակին յարգանքի տուրք մատուցելը Հայ Ազգային Կոնգրեսի համար այսօր յիշատակի ծէս-արարողութիւն, իսկ ընդհանրապէս ամենօրեայ վճռական պայքար է՝ երկրի սահմանադրական կարգը վերականգնելու միջոցով դրա նորանոր չարիքները կանխելու, գործած աւերածութիւնների հետեւանքները վերացնելու, ժողովրդավարական ու բարեկեցիկ հասարակարգ ձեւաւորելու, իւրաքանչիւրի ազատութեան ու արժանապատիւ կեանքի համար»:*

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՌՆԱՐԱՐՔՆԵՐ

*Շարունակուածէջ 1-էն*

*եւ աւելի հաստատակամ են դարձնելու մեր պայքարը ապօրինի վարչախմբի դէմ», ըսուած էր այս առթիւ Գոնկրէսի տարածած յայտարարութեան մէջ:*

*Միւս կողմէ «Մարտ 1-ի» 10 զոհերու հարազատները պահանջած են, որ իրենց որպէս վկայ ընդգրկել «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի գործով:*

*«Մենք եկել ենք Նիկոլի դատին մեր աջակցութիւնը նրան յայտնելու համար: Մենք երբեք թոյլ չենք տայ, որ մեր որդիների սպանութիւնները վերագրեն Փաշինեանին: Եթէ այս երկրում արդարութիւն լինէր, ապա Փաշինեանին փոխարէն ամբաստանեալի աթոռին կը նստէին բարձրաստիճան պաշտօնեաներ եւ այն ոստիկանները, ովքեր մարտի մէկին «Չերյոմուխա-7» են կիրառել»,- «Ա1+»-ին ըսած է «Մարտի 1-ի» զոհերէն Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեան:*

*Տիկին Յովհաննիսեան խոստացած է այցելել «Մարտի 1-ին» առնչուող բոլոր դատավարութիւններու, քանի դեռ չեն բացայայտուած եւ պատասխանատուութեան չեն ենթարկուած սպանութիւններու պատուիրատուներն ու կատարողները:*

Blue Cross of California Authorized Agent
Blue Shield of California Authorized Agent
A.B.A. INSURANCE SERVICES
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN
(818) 500-9585
BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԱՂԵՏԱԲԵՐ ՅՈԿՏԵՄԲԵՐԸ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Երկար քաշքշուքներէ յետոյ, միջազգային քաղաքական սակարանին մէջ հայ եւ Թուրք յարաբերութիւնները կշռադատելէ յետոյ, վճիռը տրուեցաւ վերջ տալու հարիւր տարիէ ի վեր սա շարունակուող վէճին, որ պատճառ դարձած է դրացի երկու ժողովուրդներու դարաւոր թշնամութեան: Ի՞նչ է վէճին էութիւնը. հողային պահանջք մը հայերու կողմէ, մանաւանդ, սփիւռքը կազմած հայերու կողմէ եւ ցեղասպանութեան ամբաստանութիւն՝ Թուրքիոյ դէմ: Երկու վէճեր՝ որոնք ոչ վերջ ունին եւ ոչ ալ լուծում, բայց կը խանգարեն Հարաւային Կովկասի խաղաղութիւնը, աւելի լայն տարածքներու ալ ազդելով: Ահա ա՛յս է աշխարհի մեծերուն մօտ տիրող կարծիքը: Շատերու շահերուն վնաս հասցնող այս վէճը կերպով մը լուծելու համար, Մ. Նահանգներու գլխաւորութեամբ գործի լծուեցան աշխարհի մեծերը եւ երկարատեւ ու համակողմանի քննարկումներէ յետոյ հասաւն եզրակացութեան մը, ըստ որուն տարակարծիք այս երկիրները, փոխադարձաբար, ճանչնան իրարու ներկայ սահմանները, դիւանագիտական յարաբերութիւն հաստատեն իրարու հետ եւ սա ցեղասպանութիւն ըսուածն ալ պատմաբաններու յանձնախումբի մը քննարկումին ենթարկեն: Հակահայ այս կարգադրութեան սենարիօն ու բեմը պատրաստելէ յետոյ, երկու երկիրներու ներկայացուցիչները հրաւիրեցին Զուիցերիա, ստորագրելու համար պատրաստուած համաձայնագիրը (փրոթոքոլ)՝ խաղաղութիւն ապահովելու համար շրջանին, ուր ի՛նչ գործեր կան ըլլալիք՝ Ատրպէյճանի քարիւղը Արեւմուտք փոխադրելը, որուն կտրուկ ճամբան Հայաստանի վրայով է, երկաթուղի պիտի կառուցուի, խողովակաշար հաստատուի եւ այս բոլորին համար Հայաստանի տարածքը պէտք է օգտագործուի: Այս համաձայնութիւնը Հոկտեմբեր 10-ին, յանուն Հայաստանի ստորագրեց Արտաքին Գործոց Նախարար Նալբանտեանը, մինչ Թուրք ներկայացուցիչները սինիք ժպիտով մը իրարու կը փսփսային:*

*Յատկապէս ուրախ էր Տիկ. Հիլըրի Գլինթըն, որ Մ. Նահանգներու պետական քարտուղարութիւնը ստանձնելէն ի վեր իր մեծագոյն գործը գլուխ հանեց: Խորամանկ մարդ է Սերժը, որ գիտէ կրակին մէջէն շագանակը ուրիշին ձեռքով հանելու կերպը: Ապա, ան լծուեցաւ այդ համաձայնագրով ընդունուած հայկական անձնատուութեան մասին բացատրութիւն տալ հայ ժողովուրդին՝ զայն խաբելու համար որ բան չենք կորսնցուցած, Հայաստանի սահմանները նոյնն են, ցեղասպանութեան հարցը մոռցուած չէ, եւայլն, մինչ համաձանգրին պայմանները հակառակը ցոյց կու տան: Սուտ խօսեցաւ Սերժ Սարգսեան յայտարարելով թէ «նախապայմաններ չկան», մինչ Հոկտեմբեր 11-էն Թուրքիոյ նախագահը յայտարարեց, թէ սահմանները պիտի չբացուին, մինչեւ որ Ղարաբաղը չվերադարձուի Ատրպէյճանին: Սուտ էր նաեւ ըսելով թէ 14 Հոկտեմբերին Պուրսայի մէջ ըլլալիք ֆութպոլի փոխվրէժի մրցումին պիտի երթայ, եթէ սահմանները բացուած ըլլան, կամ, գոնէ բացուելու յստակ յանձնառութիւն ըլլայ, մինչ Թուրքիոյ նախագահը յայտնած էր վերոյիշեալ պայմանը:*

*Ի՞նչ են այդ նախապայմանները:*

*ա. Դիւանագիտական յարաբերութիւններու հաստատում:*

*բ. Թուրքիոյ եւ Հայաստանի ներկայ սահմաններու փոխադարձ ճանաչում:*

*գ. Սահմաններու բացում:*

*դ. Հայ եւ Թուրք մօտիկ անցեալի (Ցեղասպանութիւն) քննող պատմաբաններու յանձնախումբի կազմութիւն:*

*Ըստ բ. պայմանին, ներկայ սահմաններու ճանաչումով ընդունած կ՚ըլլանք որ ա՛յս է Հայաստան ըսուածը՝ շուրջ 30,000 քառ. քլմ. տարածութեամբ, պատմական 300,000 քառ. քլմ. տարածութեան փոխարէն:*

*Իսկ դ. պայմանին Ցեղասպանութեան հարցը պատմաբաններու յանձնախումբի մը քննարկման յանձնելով մեր իսկ կամքով ընդունած կ՚ըլլանք կասկածի ենթարկել Ցեղասպանութեան վաւերականութիւնը, չփոթի մատնելով նաեւ այն պետութիւններն ու կազմակերպութիւնները, որոնք ճանչցած են զայն:*

*Այս ազգադաւ գործարքին գլխաւոր պատասխանատուն ալ Ս. Սարգսեանն է:*

*Իսկ տաս տարի առաջ, 27 Հոկտեմբերին, Հայաստանի Խորհրդարանին մէջ գործուած մեծ ոճիրին գլխաւոր երկու պատասխանատուներէն մէկը դարձեալ Ս. Սարգսեանն է, միւն նախագահ Ռոպերթ Քոչարեանը, իսկ միւսը՝ ինք իբրեւ այդ օրերու պաշտպանութեան եւ Ապահովութեան նախարար: Այդ սպանդին զոհ գացին Հայաստանի արժանաւորագոյն զաւակներէն Կարէն Դեմիրճեանն ու Վազգէն Սարգսեանը եւ իրենց հետ տասնեակ մը ուրիշ արժանաւորներ: Այսօր նախագահութիւնը գրաւած Սարգսեան կը շարունակէ ազգավնաս իր գործունէութիւնը, ոչ միայն Հայաստանի մէջ, այլեւ հասնելով մինչեւ Սփիւռք, ու վերջերս զանազան կեդրոններու մէջ կատարուած հարցազրոյցներու ընթացքին լսեց իր վարած քաղաքականութեան դէմ բուռն քննադատութիւն՝ մասնաւորաբար ներկայ սահմաններու ճանաչումին առնչութեամբ եւ մանաւանդ Ցեղասպանութեան հարցը պատմաբաններու քննարկումին յանձնելուն առթիւ: Ցեղասպանութեան ենթարկուողը սփիւռքահայութիւնն է, որուն պատահած աղէտը կասկածի ենթարկելը սակարկութեան նիւթ դարձնելը իր ուրի՛շ մէկ ոճիրն է:*

*Ժամանակն է որ հայ ժողովուրդը ցնցուի իր տխուր վիճակէն աւելի մտահոգիչ ապագայ մը տանող ճամբէն ետ դարձ կատարելու համար: Եւ քանի որ ահ ու սարսափ մատնուած եւ թշուառութեան մէջ ապրող հայրենի կորովազուրկ եղած ժողովուրդը տասնամեակէ մը ի վեր չկրցաւ տապալել այդ իշխանութիւնը, առաջնորդ ղեկավարներ պէտք է մտածեն հիմնելու ազգային գերագոյն շահերու պաշտպանութեան կազմակերպութիւն մը ինչպէս արդէն գոյութիւն ունեցող Գոնկրեսը որուն գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ դժգոհութիւնները հունաւորելով եւ միասնական տարազի տակ առնելով յառաջացել ընդհանուր յեղափոխութիւն մը՝ վերջ տալու համար աղէտին շարունակման եւ պատժելու համար յանցագործները:*


AGBU KAZAZ TRIBUTE

Armenian General Benevolent Union
Southern California District Committee proudly presents

A Celebration of the artistic genius of
**Emil Kazaz**, Winner of the Lorenzo Il Magnifico Prize in Sculpture at the Biennale Internazionale dell'Arte Contemporanea in Florence, Italy, December 2007.

With an extraordinary **Exhibition** of his latest work, sculptures, oil paintings, mixed-media and drawings.
November 6-7, 2009, 7:30 - 10:30pm
Sunday, November 8, 2:00 - 6:00pm

And a **Tribute** honoring the great artist
Saturday, November 7, 2009, at 7:30pm sharp
With the Participation of
**Shahen Khachatryan**, *art historian, author*
**Joe Lewis**, *artist, educator, author*
**Vatche Mankerian**, *concert pianist*
**Bakur Kalantaryan**, *operatic tenor*

Both events open to the public at
AGBU Alex Manoogian Center
2495 E. Mountain St., Pasadena, California

Exhibited artwork is provided by Arian Dome of Fine Art, Inc.

*The portion of the sales amount designated and provided as a donation to the AGBU will be deductible for income, gift, and estate purposes.*



**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# «ԱՍՊԱՐԷԶ» ԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ 100-ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

*ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

*Ուշագրաւ նախաձեռնութեամբ մը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի պաշտօնաթերթ՝ «Ասպարէզ» Օրաթերթ, արժանաւորագոյնս տօնակատարեց իր հրատարակութեան 100-րդ տարեդարձը:*

*Արդարեւ, կիրակի 11 Հոկտեմբեր 2009, կ.ե. ժամը 6.00ին, ընկերային ջերմ ժամէ մը ետք, Մոնթէպելլոյի Բաղրամեան հանդիսասրահի մէջ տեղի ունեցաւ յոբելենական ճաշկերոյթը: Նախաձեռնութիւնը, իր համապարփակ, տարածուն, այլապէս սպառիչ յայտագրով, բարձր գնահատեց յոբելեար «Ասպարէզ» օրաթերթի՝ գաղութէս ներս բերած ազգային, հայրենասիրական, գաղափարախօսական, ինչպէս նաեւ տեղական, հայրենական եւ միջազգային լրատուական հարիւրամեայ ներդրումը հայ լրագրական ասպարէզէն ներս: Ան գնահատանքով յիշատակեց անոր նուիրեալ հիմնադիր հետեւեալ եօթը անդամներուն անունները՝ Ա. Ասլանեանի, Պ. Յակոբեանի, Յ. Գապատայեանի, Լ. Յակոբեանի, առաջին խմբագիր Ա. Սէքլէմեանի եւ Ա. Սեդրակեանի, որոնք անկարելին կարելի դարձնելով, անխափան լոյս ընծայած են զայն:*

*Մեծարանքի հանդիսութեան կազմակերպիչ Յանձնախումբի բարի գալուստի պատշաճ խօսքով, հանդէս եկաւ Տիկ. Հուրի Ֆուրնուզեան, որ յետ իր խանդավառ եւ գօտեպնդիչ հաստատումներուն, ամբիոն հրաւիրեց «Ասպարէզ»ի խմբագիր Աբօ Պողիկեանը, որուն յանձնեց Կազմակերպիչ Յանձնախումբի գնահատանքի յուշատախտակը, իսկ Հանդիսավար Տիար Մանուկ Սէրայտարեան՝ մէջընդմէջ, ներբողական անդրադարձումներով «Ասպարէզ» Օրաթերթի հարիւրամեայ բնորոշիչ գիծերը մատնանշեց, աւարտին դիտել տալով, թէ «ամենադժուար օրերէն յետոյ մենք ոտքի մնացած ենք, ուրախ մնացած ենք եւ մանաւանդ, յոյս ունեցած ենք դէպի ապագան»:*

*Յատուկ Աթէնքէն, Օրուայ գլխաւոր բանախօս հրաւիրուած «Դրօշակ»ի նախկին խմբագիր Տիար Նազարէթ Պէրպէրեան, որ անդրադառնալէ ետք հայ-թուրք համաձայնագրերով «մեր ազգի վերեւ կուտակուող մութ ամպերուն» մասին, եւ «Ասպարէզ»ի 100.ամեակի ներշնչած հաւատքով՝ յաջողութեամբ արձանագրուելու կոչուած անոր դէպի նոր 100-ամեակ երթին վրայ՝ իր շնորհաւորութիւններով եւ յաջողութեան մաղթանքներով եզրափակեց իր ելոյթը:*

*Հ.Յ.Դ Կեդրոնական Կոմիտէի աւուր պատշաճի խօսքը արտասանեց Տիար Սեդօ Պոյաճեան: Ան առաւելաբար շեշտը դնելէ ետք «Ասպարէզ»ի՝ գաղափարական ընտանիքին եւ շրջանի հայ համայնքին մատուցած ծառայութիւններուն վրայ, իր խօսքը աւարտեց այն մաղթանքով, որ «Ասպարէզ» պէտք է դառնայ ամրոց իսկ ժողովուրդը՝ «մարտկոց»:*

*Բարոյախօսական ոգեշունչ պատգամով հանդէս եկաւ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ան, իր խօսքի աւարտին, յանուն Կիլիկիոյ Թեմի կաթողիկոս Ն.Ս. Օ. Տ.Տ. Արամ Կաթողիկոս Քէշիշեանի՝ յատուկ կոնդակով եւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պատուեց «Ասպարէզ»ի խմբագիրներէն՝ Սեւօ Բագրատունին ու հանգուցեալ Վահէ Գիւրճեանը, որոնք ներկայացուեցան տիարք Նշան Փիրումեանի եւ Օննիկ Քէշիշեանի կողմէ կատարուած ելոյթներով:*

*«Ասպարէզ»ին Բարեկամ» շքանշանով պարգեւատրուեցաւ Տիար Սարգօ Մարտիրոսեան, իր մօր յիշատակին համար «Ասպարէզ»ի ֆոնտին 100.000 տոլար նուիրելուն համար: Յարգելի նուիրատուին ծառայութիւններն եւ անոր անձնական յատկութիւնները ներկայացուց Տիար Վարուժան Գունտագճեան: Իսկ Կ.Կ..ը, յուշատախտակով մը պատուեց բարերարը:*

*Յայտագրի գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան Համազգայինի «Անի» պարախումբը, Սիւզի Բարսեղեան-Դարբինեանի եւ Եղիա Հաչողլեանի ղեկավարութեամբ, Քնարիկ Ներկարարեան՝ մեներգ, Արմինէ Ներկարարեան՝ ջութակ, եւ փրոֆ. Լեւոն Աբրահամեան՝ դաշնակի ընկերակցութիւն: Կտրուեցաւ 100-ամեակի կարկանդակը:*

*Յոբելինական հանդիսութեան եզրափակիչ խօսքով հանդէս եկան «Ասպարէզ»ի անգլերէն բաժնի խմբագիր Արա Խաչատուրեան եւ «Ասպարէզ»ի գլխաւոր խմբագիր Աբօ Պողիկեան:*

*Արա Խաչատուրեան դիտել տուաւ, թէ «Ասպարէզ» պիտի շարունակէ իր լրագրական պարտաւորութիւնները ժողովուրդը իրազեկ դարձնելու համար ազգային ընկերային եւ քաղաքական բնոյթի հարցերու մասին:*

*Աբօ Պողիկեան, իր ամփոփ ելոյթի աւարտին, գովելի նպատակասլացութեամբ մը, կոչ ըրաւ ներկաներուն, օգնել «Ասպարէզ»ին, որ աւելի կենսքոտ ըլլայ, երիտասարդ մնայ, որպէսզի աւելի լաւ ծառայութիւն մատուցէ իր շրջապատին:*

*Պատշաճ, այլ՝ գնահատելի մեծարանքի հանդիսութիւն մը իրօք, որ իր ընդհանրական, իմացական եւ առաջադրանքային խորքային իմաստով, կը պատուէ ոչ միայն յոբելեար «Ասպարէզ»ը սոսկ, նաեւ կը պատուէ՛ դժուարին Սփիւռքի պայմաններուն տակ հերոսաբար իր գոյութիւնը պահող հայատառ բոլոր թերթերը, որոնց սրբազան կոչումը՝ գոհողութեան սրբազան ուղին է եղած, այդ ճանապարհով կարենալ ծառայելու համար համայն հայութեան գոյութեան պահպանման, ծաղկման եւ հրաշափառ լինելութեան իրագործման:*

*«Մասիս» Ջերմօրէն կը շնորհաւորէ իր երկրորդ հարիւրամեակի սեմին կանգնած վաստակաշատ «Ասպարէզ»ի երախտաշատ տարեդարձի բարեբաստիկ առիթով, եւ կը մաղթէ բարի գրոհ՝ դէպի նոր հարիւրամեակ:*


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**


# ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ 11 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԵՑԻՆ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Հ.Բ.Ը.Մ.ԻՆ




*Շաբաթ, Հոկտեմբերի 17-ին, 2009, Հոլիվուտի Շերաթոն պանդոկին մէջ տեղի ունեցաւ Հարաւային Գալիֆորնիոյ Հ.Բ.Ը.Մ.ի տարեկան 10-րդ ճաշկերոյթը, հովանաւորութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի տնօրէններու կեդրոնական խորհուրդին:*

*Սոյն միջոցառումին ներկայ էր նաեւ Հ.Բ.Ը.Մ.ը նախագահ Պերճ Սեդրակեան: Երեկոյին յատուկ պատուի արժանացան օրուան նախագահ ազգային բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Թամար Մանուկեանները:*

*Պր. Պերճ Սեդրակեան ներկաներուն պաշտօնապէս յայտնեց թէ Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Թամար Մանուկեան ասպետական նուիրատուութիւն մը կը կատարեն 11 միլիոն տոլար յատկացնելով Փասատինայի Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնին եւ երկրորդական վարժարանին:*

## ԿՐԹԱԿԱՆ

# «ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ Ի՞ՆՉ ԻՐԱԳՈՐԾԵՑԻՆ ԿԷՍ ԴԱՐ»

*Վերոյիշեալ նիւթին շուրջ սփիւռքահայ կրթահամակարգը յուզող քննարկման երեկոյ մը կազմակերպած էր Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըս մասնաճիւղը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի 22 Հոկտեմբեր, 2009, երեկոյեան ժամը 7:30ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանին մէջ:*

*Սոյն միջոցառման հանդիսավարն էր Վաչէ Սէմէրճեան: Ան իր բացման խօսքին մէջ հակիրճ ակնարկով մը ծանօթացուց արագօրէն ուռճացող Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութի կրթական կեանքը: Ի յայտ եկաւ որ շուրջ 400,000 հաշուող հայ զանգուածէ ներս կը գործեն 14 ամենօրեայ վարժարաններ, առանց հաշուելու միօրեայ դպրոցները (շաբաթօրեայ կամ կիրակնօրեայ): Արդարեւ, ըստ ոչ պաշտօնական վիճակագրութեանց դպրոցական տարիք ունեցողներու թիւն է 50 հազար, որոնց հինգ հազարը միայն կը յաճախեն հայկական վարժարաններ: Իսկ մնացեալ 4.5 հազարը՝ տեղական վարժարաններ, մեծ մասամբ նիւթական պատճառներով զրկուած կը մնան հայեցի դաստիարակութենէն:*

*Օրուան գլխաւոր բանախօսն էր ծանօթ կրթական մշակ Դոկտ. Օննիկ Քէշիշեան: Ան սրբագրութիւն մը կատարելով նշեց որ Հարաւային Գալիֆորնիոյ առաջին ամէնօրեայ հայկական վարժարանը Ֆերահեանն է, հիմնուած 45 տարի առաջ: Նախաձեռնութեամբ տեսլապաշտ կրթական մշակ Գաբրիէլ Ինճէճիքեանի:*

*Յարգելի բանախօսը բարձր գնահատելով հանդերձ հայապահպանման մեծ կռուան հանդիսացող մեր վարժարաններու եւ մանկավարժներու ներդրումը անցնող կէս դարու ընթացքին: Այսուհանդերձ*

*Շար.ը էջ 18*


## Օտարագիր Հայ Գրողներու Համագումար

**Կազմակերպութեամբ Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան, Հայաստանի Գրողներու Միութեան եւ մասնակցութեամբ Եու. Սի. Էլ. Էի. Հայագիտական Կեդրոնին**

**UCLA Schoenberg Hall-ի մէջ**
**Նոյեմբեր 6 – 8, 2009**
**Հայաստանէն գրողներու պատուիրակութիւն եւ մասնակիցներ տարբեր վայրերէ**

**Ուրբաթ եւ Շաբաթ 10էն 5 - Կիրակի 2էն 5**

**Նաեւ նկարչական ցուցահանդէս, Հայ Երաժշտական Երեկոյ, Թատերական ներկայացում, Գիրքի գինեձօն եւ ճաշկերոյթ**

**Տեղեկութեանց համար զանգահարել (818) 986-0718**

## ՄԱՏԱՂՈՐՀՆԷՔ

# ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 89-ՐԴ ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱՒ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ



Տոգորուած Հաճնոյ Հերոսամարտի ինքնամոռաց հայրենասիրական ոգիով, Լուիզիանայի մայրաքաղաք Պաթոն Ռուժի փոքրաթիւ հայ գաղութը, համախմբուած Սուրբ Կարապետ Եկեղեցւոյ շուրջ, կը պահէ իր ազգային ինքնութիւնը, սովորութիւններն ու պատմութիւնը:

Հաճնոյ Հերոսամարտի ոգեկոչումը իրենց համար ազգային պարտականութիւն մը ըլլալէ աւելի՝ առիթ մըն էր ներշնչանքի, աննահանջ պայքարի, հայադրոշմ յարատեւութեան եւ ազգասիրական ոգիով լիցքաւորուելու: Խանդավառ էին բոլորը: Ոմանք զբաղած էին հոգեճաշ-ճիտապուրի պատրաստութեամբ, ուրիշներ՝ Ս. Կարապետ Եկեղեցիին բարեզարդումով, դպիրներ եւ սարկաւագներ Սուրբ Պատարագի երգեցողութեան փորձերով, պատանիներ՝ Խորանի ծառայութեան դաստիարակութեամբ:

Եւ այդ Թելեթոնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Նոյեմբեր 1, կէսօրէ ետքի ժամը 4-էն մինչեւ կէս գիշեր (ժամը 12), AMGA 280 կայանի «Քաջ Նազար» հեռուստածրագրին վրայ, որ կը հեռասփռուի արեւմուտքէն-արեւելք ողջ Ամերիկայի տարածքին: Ինչպէս նախորդ տարիներուն, հաւանական է, որ այս տարի եւս քոյր տարբեր հեռուստածրագրեր միանալով AMGA-ին, հեռասփռեն Թելեթոնը, իրենց աջակցութիւնը բերելով անոր հետապնդած սուրբ նպատակին իրագործման և յաջողութեան:

Այո, Սուրբ նպատակ:

Հայ ժողովուրդը այս գերագոյն արժէչորումով ու գնահատականով կը պիտակէ իր գոյութեան ամրագրման, իր տեւականութեան ապահովման սատարող՝ հոգեկան, ֆիզիքական, նիւթական թէ բարոյական այն բոլոր յանձնառութիւններն ու ծառայութիւնները, որոնք հեռաւոր դարերէն մինչեւ այսօր ի գործ դրուած են ու դեռ եւս կը դրուին մեր մտքի, գրչի ու զէնքի ընտրեալ հերոսներուն կողմէ, իբրեւ ընտիր օրինակ, իբրեւ գոյերթի ճշմարիտ ուղի:

Այդ ընտրեալներէն ոմանք, վանքերու և ճգնարաններու խոնաւ խուցերու խաւարը հազիւ ցրող մոմի ու ճրագի լոյսին տակ պատմագրութիւն, գրչագրութիւն, աստուածային բանաստեղծութիւն ու արուեստ արարելով, մշակոյթ ծաղկեցնելով, ժառանգած են մեզի:

Ուրիշներ, որպէս Սուրբ նպատակի զինուորեալներ, որպէս ֆիտայի, որպէս ազատամարտիկ սուր ու զէնքը ձեռին հայրենի հողը, ժողովուրդին կեանքը պաշտպանելով՝ կուրծք տուած են ներխուժող զաւթիչներուն, բարբարոս ջարդարարներուն:

Ու դեռ ուրիշ նուիրեալներ, յանուն Սուրբ նպատակի գրիչը վերցուցած՝ ազատութեան, հայրենասիրութեան և արդարութեան ղօղանջը հնչեցուցած, ինքնագիտակցութիւնն ու կամքը սրած, պայքարի ոգին կոփած, սիրոյ ու հաւատքի լուսաւոր սերմերը ցանած են մեր ժողովուրդին մէջ, դէպի անմահութիւն տանող ճանապարհը ցոյց տուած:

Այս բոլորէն զատ, այս բոլորին հաւասար, կայ, գոյութիւն ունի նաեւ ուրիշ Սուրբ նպատակ կրող մը, նոյնքան վեհիմաստ, նոյնքան գեղեցիկ, նոյնքան արժանի իր տեղը ունենալու վերոյիշեալ ազգային թէ մարդկային արժէքներու համակարգի ցանկին վրայ:

Բարեգործութիւնն է այդ մէկը. բարեգործ հա՛յն է ան: Այն հայ հաւաքականութիւնը, այն անհատ հայը, որուն գոյութեան նպատակը, կեանքի ուղին է օգնել իր նմանին, օգտակար ըլլալ տկարին, հիւանդին, որբին, որբեւայրիին, կեանքին նոր բացուող երեխաներուն և ալեհերութեան դուռը բախող տարեցներուն: Բոլոր, բոլոր անոնց, որոնք բախտի ու ճակատագրի չար խաղով թէ ընկերային անարդարութեան զոհ դառնալով կը գտնուին զրկանքի ու կարիքի ճիրաններուն մէջ, մատնուած են ցաւի ու տառապանքի ամէնօրեայ տուայտանքներուն:

Այո՛, Սուրբ նպատակին ծառայել է օգնել վերոյիշեալ դժբախտներուն: Եւ, հակառակ մեր մէջ գործող բարեսիրական բազմաթիւ միութիւններուն, կազմակերպութիւններուն և բարեգործութիւնը իրենց կեանքի ուղին ու դաւանանքը դարձուցած երախտարժան անհատներուն ցուցաբերած օգնութեան, տկարին օգնելը, հաշմանդամին կամ թերածինին սատարելը, թէկուզ բարեգործութեան փոքրագոյն չափ ու ծաւալով, անկասկած, մարդասիրական, հայա-սիրական և հայրենասիրական գնահատելի ու քաջալերելի ծառայութիւն է:

Սուրբ Ծնունդի Հիմնադրամ՝ ի նպաստ ծնողազուրկ և հաշմանդամ երեխաների և նրանց մանկատների վերանորոգութեան նախաձեռնութիւնը, որուն հիմնադիրն է «Քաջ Նազար» երգիծական ամսագրի և «Քաջ Նազար» հեռուստածրագիր խմբագիր ու հաղորդավար Յովհաննէս Բալայեանը, իր ինը տարին բոլորելով, Նոյեմբեր 1-ի Կիրակին, ժամը 4-էն մինչեւ կէս գիշերուան ժամը 12-ը պիտի ունենայ իր 10-րդ տարեկան նուիրահաւաք Թելեթոնը:

Ինը տարիներէ ի վեր Լոս Անճելըսի հայ համայնքին մէջ գործող այս Հիմնադրամը, ըլլալով հանդերձ համեստ անհատական նախաձեռնութեան ծնունդ, իրագործած է շօշափելի բարեգործական աշխատանքներ Մայր Հայրենիքի մէջ:

Անցած ինը տարիներու ընթացքին, այս Հիմնադրամի կողմէ կազմակերպուած և Դեկտեմ-բերի 25-էն մինչեւ Նոր տարուան Յունուարի 13-ը, Երեւանի թէ Հայաստանի սահմանային գիւղերու և քաղաքներու մէջ տեղի ունեցած տօնական հանդիսութիւններուն մասնակցած են աւելի քան 135,000 երեխաներ, Ձմեռ Պապիկէն ստանալով իրենց նուէրները և երգ ու պարի, ասմունքի ու մանկական խաղերու զուարթ մթնոլորտի մը մէջ դիմաւորելով Հայկական Սուրբ Ծնունդն ու Ամանորը:

Նոյն այս Հիմնադրամին շնորհիւ, անցեալ տարի արդիական չափանիշներով վերանորոգուեցաւ Խարբերդի երեք յարկանի շէնքը, ուր հանգստաւէտ ու լուսաւոր սենեակներու մէջ դաստիարակութիւն ու խնամք կը ստանան 250 երեխաներ:

Երեւանի կոյրերու դպրոցը, շնորհիւ այս Հիմնադրամին, այսօր ունի կոյրերուն յատուկ ուռուցիկ տառերով համակարգիչ, իր յարակից սարքերով: Այս կերպով, աչքի տեսողութենէ զրկուած մեր երեխաներուն առիթ կ՚ընծայուի, ի հեճուկս իրենց դժխեմ ճակատագրի, աստուածատուր իրենց շնորհները զարգացնելու հնարաւորութիւն:

Այսօր, Բալայեանի նախագահած Սուրբ Ծնունդի ի նպաստ Հայաստանի ծնողազուրկ և հաշմանդամ երեխաների մանկատների վերանորոգութեան Հիմնադրամը, Սուրբ նպատակի ծառայութեան շրջագծին մէջ, Հոկտեմբեր 10-ին, 2009թ., աւարտած է Սպիտակի թիւ 1 դպրոցի 6 բաղնիքներու, 6 զուգարաններու, 1 լուացքատան և յարակից շէնքի հիմնական կառուցումը: Կը լսենք, թէ 2010 թուականին, Հիմնադրամը պիտի դիմագրաւէ նոր մարտահրաւէր մը: Արդարեւ, Սպիտակի երիտասարդ և համակրելի քաղաքապետ Գագիկ Սահակեանի և դպրոցի տնօրէնին գործակցու-թեամբ, Սպիտակի թիւ 1 դպրոցի աւելի քան 100 գիշերող երեխաներուն համար Հիմնադրամը կառուցելու է ննջարաններ և մարզարան մը:

Այս բոլորը կարելի կ՚ըլլայ իրագործել ամէն տարի Նոյեմբերին, «Քաջ Նազար» հեռուստածրագրի կողմէ կազմակերպուած Թելեթոններուն մասնակցող՝ հայ ժողովուրդի զաւակներու սրտաբուխ նուէրներուն շնորհիւ, որոնք կլենտէյլէն մինչեւ Ֆրեզնօ, մինչեւ Նիւ-Եորք, Պոստոն, Թեքսաս, Լուզիանա և այլ բազմաթիւ նահանգներ, կը հետեւին Թելեթոնին:

Գիտեմ, դժուար ժամանակներու մէջ ենք:

Ինչպէս ողջ աշխարհը, բարգաւաճ ու հարուստ Ամերիկան ալ տնտեսական դժուար կացութիւններ կը դիմագրաւէ անգործութիւն, եկամուտներու կրճատում, անստոյգ, մտահոգիչ ապագայի հեռանկար եւայլն: Սակայն չմոռնանք անմահ Ջիւանիին նոյնքան անմահ պատգամը՝

«Ձախորդ օրերը ձմրան նման կուգան ու կ՚երթան,

Վհատելու չէ, վերջ կ՚ունենան, կուգան ու կ՚երթան»:

Այո՛, կուգան ու կ՚երթան: Մանաւանդ, այս ամէն ինչով հարուստ, ամէն դժուարութիւն դիմակայելու հնարաւորութիւն ընծայող երկրին մէջ, ուր խիղճ ու կամք ունեցող գործնապաշտ, տեսլապաշտ մարդիկ ու ղեկավարներ գիտեն դիմակայել դժնդակ կացութիւններ, յաղթահարել զանոնք և կեանքը դարձեալ իր բնականոն հունին մէջ դնելով, շարժիլ յառաջ:

Եւ յետոյ, այս Թելեթոնով խնդրուածը հարիւրաւոր, հազարաւոր տոլարներ չեն: Ինչպէս Յովհ. Բալայեանը միշտ շեշտած է իր հաղորդումներու ընթացքին, կարելի է նուիրել 1 տոլար, 5 տոլար, 10 տոլար, որ նուազագոյն եկամուտ ունեցողին իսկ ապրուստին վրայ չի կրնար ազդել: Կարեւորը մասնակցիլն է: Կարե-ւորը հայրենի մեր բալիկներուն յոյս ու հաւատք ներշնչելն է, թէ ովկիանոսներէն անդին կան մարդիկ, որոնք իրենց պէս հայկական արիւն, հայու սիրտ ու հոգի կը կրեն, կը մտածեն իրենց և Հայաստանի մասին և կ՚ուզեն հնարաւորինս օգտակար ըլլալ իրենց:

Եկէք սատարենք ձեռք երկարենք, սատարենք հայրենի մեր երեխաներուն կեանքի բարելաւման:

Եկէք Նոյեմբերի 1-ին կատարենք մեր ազգանուէր պարտականութիւնը, ամէն մէկս իր չափով ու ձեւով մուծելով իր լուման:

Եկէք օգնենք այս Սուրբ գործին, զօրակցելով մեր վաղուան հիմ ու սիւն, յոյս ու լոյս, մեր լինելութեան, մեր գոյութեան երաշխիք Հայաստանի վաղուան ժառանգորդներուն ու պաշտպաններուն, հայրենի մեր մինուճար բալիկներուն:




ARMENIA'S CHILDREN CHRISTMAS GIFT FUND
SINCE 1999

# "Քաջ Նազար" հանդէսը եւ հեռուստաժամը Ներկայացնում է

# 10-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

**Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

(հիմնուած 1999թ.)



**Կիրակի,Նոյեմբեր 1, 2009**
**երեկոեան ժամ 4-12-ը**

Sponsored by
"KACH NAZAR" Magazine & TV Show

## 10 ANNIVERSARY
## NATIONWIDE TELETHON
## ON SUNDAY NOVEMBER 1, 2009

to Benefit CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS
and DISABLED CHILDREN
and The RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)

AMGA CHANNEL 280
Glendale, CA
From 4:00 pm
12midnight

**ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .**

P.O. BOX 250038 • GLENDALE, CA 91225
Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070
TAX ID # EIN 26-3208049
E-mail: forourkids99@gamil.com







# ԿՈՄԻՏԱՍ

*Կոմիտասը՝ Սողոմոն Գէորգի Սողոմոնեանը, ծնուել է 1869 թուականի Սեպտեմբերի 26-ին Անատոլիայի (Թուրքիա) Կուտինա (Քիոթահիա) քաղաքում: Նրա հայրը՝ Գէորգ Սողոմոնեանը, կօշկակար էր. միեւնոյն ժամանակ նա երգեր էր յօրինում եւ օժտուած էր գեղեցիկ ձայնով: Երաժշտական վառ ունակութիւններով աչքի էր ընկնում նաեւ կոմպոզիտորի մայրը՝ Թագուհին, որը գորգագործուհի էր:*

*Անուրախ ու զրկանքներով լի էր Կոմիտասի մանկութիւնը: Նա կորցրեց մօրը, երբ չկար նոյնիսկ մէկ տարեկան: Հօր զբաղուածութեան պատճառով երեխայի խնամքն իր վրայ վերցրեց տատը: Եօթ տարեկանում Կոմիտասն ընդունուեց տեղի չորսդասեան դպրոցը, որն աւարտելուց յետոյ հայրը նրան ուղարկեց Բրուսա՝ ուսումը շարունակելու: Վերջինս Կոմիտասին չյաջողուեց, եւ չորս ամիս անց նա տուն դարձաւ բոլորովին որբացած. վախճանուել էր հայրը, իսկ Սողոմոնն ընդամէնը 11 տարեկան էր...»: Նա նիհարակազմ, վտիտ ու գունատ տղայ էր, միշտ խոհեմ ու բարի: Նա վատ էր յագնւում»,- այսպէս էր յիշում Կոմիտասին նրա դասընկերներից մէկը: Սողոմոնին յաճախ տեսնում էին լուացքատան սառը քարերին քնած: Նա հիանալի երգում էր, եւ պատահական չէր, որ Կուտինայում նրան անուանում էին «Թափառական փոքրիկ երգիչ» : Իր հիանալի ձայնին էր Սողոմոնը պարտական նաեւ այն իրադարձութեան համար, որն հիմնովին փոխեց նրա կեանքի ընթացքը: 1881 թուականին Կուտինայի վանահայր Գ.Դերձակեանը պէտք է մեկնէր Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրուելու: Կաթողիկոսի խնդրանքով նա իր հետ մի ձայնեղ որբ տղայ պէտք է տանէր՝ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում ուսանելու: Քսան որբ երեխաներից ընտրուեց տասներկուամեայ Սողոմոնը: Քանի որ այդ ժամանակ Կուտինայում հայերէն խօսելն արգելուած էր, տղան խօսում էր թրքերէն ու Գէորգ Դ. կաթողիկոսի ողջոյնին պատասխանում է. «Ես հայերէն չեմ խօսում, եթէ ուզում էք՝ կ՛երգեմ»: Եւ իր գեղեցիկ սոպրանոյով երգում է հայերէն շարական՝ առանց որեւէ բառ հասկանալու: Բացառիկ ընդունակութիւնների շնորհիւ Սողոմոնը կարճ ժամանակում յաղթահարում է բոլոր խոչընդոտները, կատարելապէս տիրապետում հայերէնին:1890 թուականին Սողոմոնը ձեռնադրւում է սարկաւագ: 1893ին նա աւարտում է ճեմարանը, ապա նրան շնորհւում է աբեղայի աստիճան եւ տրւում 7-րդ դարի նշանաւոր բանաստեղծ, շարականների հեղինակ Կոմիտաս կաթողիկոսի անունը: Ճեմարանում Կոմիտասը նշանակւում է երաժշտութեան ուսուցիչ:*

*Մանկավարժութեանը զուգընթաց Կոմիտասը ստեղծում է երգչախումբ, ժողովրդական գործիքների նուագախումբ, մշակում ժողովրդական երգեր, գրում իր առաջին ուսումնասիրութիւնները հայ եկեղեցական երաժշտութեան մասին: 1895 թուականին Կոմիտասը արժանանում է վարդապետի հոգեւոր աստիճանին: Նոյն թուականի աշնանը նա մեկնում է Թիֆլիս՝ երաժշտական ուսումնարանում սովորելու: Սակայն, հանդիպելով Պետերբուրգի կոնսերուատորիայում կրթութիւն ստացած կոմպոզիտոր Մակար Եկմալեանին՝ փոխում է իր մտադրութիւնը եւ վերջինիս մօտ ուսումնասիրում ու իւրացնում Հարմոնիայի դասընթացը: Այս պարապմունքները եւրոպական երաժշտական տեխնիկային տիրապետելու իւրատեսակ նախերգանք եւ ամուր հիմք հանդիսացան: Կոմիտասի կեանքի յետագայ իրադարձութիւնները կապուած են Եւրոպայի խոշոր երաժշտական կենտրոնի՝ Պեռլինի հետ, ուր նա մեկնեց ուսանելու՝ կաթողիկոսի բարեխօսութեամբ՝ թոշակ ստանալով հայ խոշոր նաւթարդիւնաբերող Ալեքսանդր Մանթաշեանից: Կոմիտասն ընդունւում է պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնաւոր կոնսերուատորիան: Վերջինիս պարապմունքներին զուգընթաց կոմպոզիտորն յաճախում է Պեռլինի Կայսերական համալսարանի փիլիսոփայութեան, գեղագիտութեան, ընդհանուր եւ երաժշտութեան պատմութեան դասախօսութիւններին: Ուսումնառութեան տարիներին Կոմիտասն հնարաւորութիւն ունեցաւ «շփուել» եւրոպական երաժշտութեան հետ՝ աւելի հարստացնելով գիտելիքների իր պաշարը, զբաղուել երաժշտա-քննադական գործունէութեամբ: Միջազգային երաժշտական ընկերութեան հրաւէրով նա դասախօսութիւն կարդաց՝ նուիրուած հայ եկեղեցական եւ աշխարհիկ երաժշտութեանը, այն համեմատելով թուրքական, արաբական, քրտական երաժշտութեան հետ: 1899 թ. Սեպտեմբերին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին եւ իսկոյն ձեռնամուխ լինում իր երաժշտական գործունէութեանը: Կարճ ժամանակում Կոմիտասն արմատականօրէն փոխում է երաժշտութեան ուսուցման դրուածքը ճեմարանում, ստեղծում է ոչ մեծ նուագախումբ, բարձր վարպետութեան հասցնում երգչախմբի կատարողական մակարդակը:*

*Նա շրջում է Հայաստանի շատ վայրեր՝ գրի առնելով հազարաւոր հայկական, քրտական, պարսկական եւ թրքական ժողովրդական մեղեդիներ, կատարում երգերի մշակումներ: Լրջօրէն զբաղւում է նաեւ գիտա-հետազօտական աշխատանքով. ուսումնասիրում է հայ ժողովրդական եւ հոգեւոր մեղեդիները, աշխատում հայկական խազերի վերծանման վրայ, ձայնեղանակների տեսութեամբ: Կոմիտասն աշխարհի տարբեր երկրներում հանդէս է գալիս որպէս հայ երաժշտութեան կատարող եւ պրոպագանդիստ: Կոմպոզիտորը սկսում է խորհել նաեւ երաժշտական խոշոր, մոնումենտալ ձեւերի մասին: Մտադրւում է ստեղծել «Սասնայ ծռեր» երաժշտական էպոսը եւ շարունակում է իր աշխատանքը «Անուշ» օպերայի վրայ, որը սկսել էր գրել 1904-ից: Նա իր ուշադրութիւնը բեւեռում է ժողովրդական երաժշտական ստեղծագործութեան հետ կապուած թեմաների վրայ, բացայայտում է ժողովրդական երգերի բովանդակութիւնը: Իհարկէ՛, կոմպոզիտորի աշխարհայեացքի նմանօրինակ հիմքերը պէտք է յանգեցնէին եկեղեցու եւ Կոմիտասի միջեւ անխուսափելի կոնֆլիկտի: Աստիճանաբար, եկեղեցու նոր ղեկավարների անտարբերութիւնը, վանական միաբանութեան յետադէմ խաւի թշնամական վերաբերմունքը, բամբասանքներն ու զրպարտանքն աւելի մեծացան եւ թունաւորեցին կոմպոզիտորի կեանքը, մի մարդու, որը ժամանակակիցների տպաւորութեան մէջ գամուել է, որպէս բացարձակապէ աշխարհիկ անձնաւորութիւն: Կոնֆլիկտն այնքան է խորանում, որ Կոմիտասը մի աղերսագին գրաւոր դիմում է յղում կաթողիկոսին՝ թախանձելով իրեն ազատ արձակել, թոյլ տալ հանգիստ ապրել եւ ստեղծագործել: Այս դիմումն անհետեւանք է մնում, եւ սկսւում է աւելի անսքօղ հալածանք Կոմիտասի նկատմամբ: 1910-ին թ.ին Կոմիտասը թողնում է Էջմիածինը ու մեկնում Կ.Պոլիս: Նա կարծում էր, թէ Պոլսում կարող էր գտնել այնպիսի միջավայր, որը կը հասկանար իրեն, կը պաշտպանէր եւ կը խրախուսէր իր գործունէութիւնը, այստեղ նա կը կարողանար իրականացնել իր իղձերը: Կոմիտասը ցանկանում էր ստեղծել ազգային երաժշտանոց, որի հետ էր կապում հարազատ ժողովրդի երաժշտութեան յետագայ բախտը: Սակայն կոմպոզիտորին չի յաջողւում այս, ինչպէս եւ շատ այլ ձեռնարկումներ իրագործել: Նրա բոլոր նուիրական մտայղացումներն հանդիպում են տիրող իշխանութիւնների անտարբերութեանն ու խորտակւում:*



*Պոլսում Կոմիտասը կազմակերպեց երեք հարիւր հոգանոց խառը երգչախումբ՝ անուանելով այն «Գուսան»: Վերջինս մեծ ժողովրդականութիւն վայելեց բնակչութեան լայն շրջաններում: Նրա համերգային ծրագրերում հիմնականում տեղ էին գտնում հայ ժողովրդական երգերը: Կոմիտասն յաճախ իր ժամանակն անց էր կացնում ուղեւորութիւնների մէջ՝ հանդէս գալով զեկուցումներով ու դասախօսութիւններով, իր կազմակերպած համերգներում ելոյթ ունենալով որպէս մեներգիչ ու խմբավար: Կոմպոզիտորն հիանալի կերպով տիրապետում էր սրինգին եւ դաշնամուրին: Նա օժտուած էր իր ունկնդիրներին յուզելու եւ համոզելու մեծ ուժով: Կոմիտասի արուեստն հիացրել էր հռչակաւոր երաժիշտներ Վենսան դ՛Էնդիին, Գաբրիէլ Ֆորէին, Քամիլ Սեն-Սանսին... Իսկ 1906 թուականին մի համերգից յետոյ ֆրանսացի նշանաւոր կոմպոզիտոր Կլոդ Դեբիւսին յուզուած բացականչել էր. «Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջեւ կը խոնարհիմ»: Պոլսում նոյնպէս Կոմիտասը չգտաւ անշահախնդիր համախոհներ, որոնք կ՛օգնէին իր ծրագրերն իրագործելու: Դեռ աւելին. եթէ Էջմիածնում նա իր հարազատ ժողովրդի հետ էր, մօտ էր նրա կենցաղին ու արուեստին, Պոլսում զրկուած էր նաեւ դրանից: Այդուհանդերձ, նա շարունակում է իր լարուած աշխատանքը: Կոմիտասն առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում հոգեւոր գործերի ստեղծմանը: Այս բնագաւառում նրա գլուխգործոցը Պատարագն է՝ գրուած արական երգչախմբի համար: Կոմպոզիտորը կարեւոր նշանակութիւն է տալիս նաեւ երաժշտագիտական գործունէութեանը: Փարիզում Միջազգային երաժշտական ընկերութեան համաժողովում նա կարդում է երկու զեկուցում՝ «Հայ ժողովրդական երաժշտութիւն» եւ «Հայ հոգեւոր երաժշտութեան մէջ հին եւ նոր նոտագրութեան մասին» թեմաներով, որոնք մեծ հետաքրքրութիւն են առաջացնում համաժողովի մասնակիցների շրջանում: Կոմիտասին առաջարկւում է կարդալ նաեւ չնախատեսուած զեկուցում՝ «Հայ երաժշտութեան ժամանակի, կշռի, շեշտաւորութեան եւ տաղաչափութեան մասին» թեմայով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարութիւնը սկսեց իրագործել հայ ժողովրդի մի հատուածի դաժան եւ անմարդկային բնաջնջման իր հրէշաւոր ծրագիրը: 1915 թուականի Ապրիլին մի շարք նշանաւոր հայ գրողների, հրապարակախօսների, բժիշկների, իրաւաբանների հետ մէկտեղ ձերբակալուեց նաեւ Կոմիտասը: Խոշտանգումներով ուղեկցուող բանտարկութիւնից յետոյ նա աքսորուեց Անատոլիայի խորքերը, ականատես դարձաւ հայ ժողովրդի անգութ բնաջնջմանը: Ու թէեւ ազդեցիկ անձանց միջնորդութեամբ Կոմիտասը վերադարձաւ Պոլիս, բայց վերապրած սարսափներն անջնջելի հետք թողեցին նրա հոգեկան աշխարհի վրայ: Կոմիտասն առանձնացաւ արտաքին աշխարհից, փակուեց միայն իր մռայլ ու ծանր խոհերի մէջ՝ ընկճուած եւ մելամաղձոտ: 1916 թուականին կոմպոզիտորի առողջական վիճակն է՛լ աւելի վատթարացաւ, եւ նրան տեղափոխեցին հոգեբուժարան: Սակայն ապաքինման ոչ մի յոյս չկար: Բժշկութիւնն անզօր էր փոխելու հիւանդութեան ընթացքը: Հայ երաժշտութեան հանճարն իր վերջին ապաստանը գտաւ Փարիզի Վիլ-Ժուիֆ արուարձանի հիւանդանոցում՝ անցկացնելով այնտեղ գրեթէ քսան տարի: 1935 թուականի Հոկտեմբերի 22ին ընդհատուեց մեծն Կոմիտասի կեանքը: 1936 թուականի գարնանը նրա աճիւնը տեղափոխուեց Հայաստան եւ հողին յանձնուեց Երեւանում՝ մշակոյթի գործիչների պանթէոնում: Ոչ պակաս ողբերգական ճակատագիր ունեցաւ նաեւ Կոմիտասի հսկայական ժառանգութիւնը: Նրա ձեռագրերից շատերը ոչնչացան կամ ցրուեցին աշխարհով մէկ... «Հայ ժողովուրդը կոմիտասեան երգի մէջ գտաւ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնութիւնը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպէս այսօր, այնպէս էլ յաւիտեան»: (Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.):*

## ՄՇԱԿՈՅԹ

# ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

## (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

***ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ (ԲԱԼԱՅԵԱՆ)***

*Իրանահայ գաղութի մասին շատ քիչ է գրուել, շատ քիչ գրքեր կան, եթէ նկատի չառնենք Նազար Գորոյեանի «Իրանահայ պատմութիւն», Սեդա եւ Բաբգէն Բալեան Տէր Յակոբեանների պատմական մէկ աշխատութիւնը: Բայց դժբախտաբար դրանք լրիւ չեն պատկերում մեր հարուստ պատմութիւնը: Իրանում ունեցել ենք մէկ տասնեակից աւելի պատմաբաններ, բանասէրներ, որոնց թւում են Յովսէփ Միրզայեանը, Արամ Երեմեանը, Հայկ Աճէմեանը, Անդրանիկ Սարեանը, Լեւոն Գ. Մինասեանը, եւ մի քանի ուրիշներ:*

*Իրանում չենք ունեցել մեծահարուստներ միւս գաղութների չափանիշներով, բայց Իրանահայերը բարերարներ շատ են ունեցել, որոնք կառուցել են դպրոցներ, եկեղեցիներ, ծերանոցներ, դարմանատուներ եւայլն: Իրանում կան մի քանի գրական հրատարակչական ֆոնտեր: Յիշենք Վազգէն Շահվերդեանի կրթական ֆոնտը, Հայկաշէնի Ս. Ներսէս Շնորհալի, Սիմոն Բաբումեան, Յովիկ Էդգարեան հրատարակչական ֆոնտը, իսկ նիւթական համեստ միջոցների տէր Սպահանի հոգեբանական եւ հայագիտական համալսարանների տեսուչ՝ հոգեբանութեան դոկտոր Մեսրոպ Բալայեանը իր ամբողջ ունեցածը տրամադրեց Սպահանի առաջնորդարանին, հիմնելով «Մանկական գրքերի հրատարակչական ֆոնտ», որն արդէն 3 անուն գիրք է լոյս ընծայել:*

*Իրահանայ պատմութեան համար շատ օգտակար են անուանի պատմաբան Անդրանիկ Սարեանի «Պատմութիւն Ջհարմահալ գաւառի», բանասէր Լեւոն Գ. Մինասեանի «Պատմութիւն Փերիոյ գաւառի» գրքերը, Յարութիւն Ա. Քհնյ. Տ. Մեսրոպեանի «Կեանքի յուշերը», Յ. Էլմարի Անդրէ Տ. Օհանեանի եւ մի քանի այլ մտաւորականների յուշերը, որոնք սակայն ինչպէս նշուեց թերի են եւ պակասաւոր:*

*Այստեղ անհրաժեշտ է յիշել պարսկահայ Առաքել վարդապետ Դաւրիժեցուն (Դաւրիժեցի-Ատրպատական), որի ծննդեան թիւը անյայտ է, բայց վախճանուել է 1670 թուին:*

*Նա սովորել է Էջմիածնում եւ ստացել վարդապետական աստիճան: 1636 թուին նշանակուել է Յովհաննու վանքի նուիրակ, ապա որպէս պատուիրակ մեկնել է Սպահան-Նոր Ջուղայ, Ուրֆա, Հալէպ, Աթէնք եւ Երուսաղէմ:*

*1651 թուին Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի առաջարկով գրել է հայ ժողովրդի պատմութիւնը որն աւարտել է 1662 թուին: Այդ տեղ Առաքել վարդապետը ամենայն խնամքով նկարագրել է հայ ժողովրդի, 1602-1662 թուերի քաղաքական իրավիճակը, տալով պատմական տուաեւներ հայ-պարսկական պատերազմների, սովի, գաղթի, թալանի եւ հայ գաղթականների վիճակից: Նա նկարագրել է նաեւ Շահ Աբաս Սաֆավի պարսից արքայի միջոցով հայերի բռնագաղթը, եւ տառապանքները: Առաքել Դաւրիժեցու պատմութեան մէջ կան նաեւ վրացի, ադրպէյճանցի, պարսիկ, թուրք, հրեայ ժողովուրդների մասին եւս վկայութիւններ: Նա առաջին հայ պատմաբանն է որի գիրքը լոյս է տեսել իր կենդանութեան օրօք 1669 թուին, Ամստերտամում (Հոլանտա): Առաքել Դաւրիժեցու պատմութիւնը 1874 թուին թարգմանուել է Ֆրանսերէնի: Մահացել է Ս. Էջմիածնում եւ թաղուել վանքի գերեզմանատունը: Թաւրիզում դեռ պահպանւում է մեծ պատմաբանի տունը: Նրա շառաւիղներից ապրում են Իրանում, Ամերիկայում, եւ տարբեր երկրներում:*

*Պատմագրեան գերդաստանի անդամներից է եղել տաղանդաւոր երաժշտագէտ-խմբավար՝ Աշոտ Պատմագրեանը որն տարիներ առաջ վախճանուեց Պէյրութում, երբ պատրաստւում էր արդէն վերջնականապէս հաստատուել մայր հայրենիքում:*

*Այսքանը միջանկեալ: Սակայն Իրանի ազգային մարմինների եւ մտաւորականութեան պարտքն է հրատարակել Իրանահայ գաղութի լրիւ պատմութիւնը, որն կենսական նշանակութիւն ունի Իրանի հայութեան համար, մի երկիր որ հարեւան լինելով Հայաստանին, ժամանակին այնտեղ ապրել են կէս միլիոնի հասնող հայեր:*

*Իրանահայութիւնը թէեւ չտեսաւ եղեռն, գաղթ, թալան ու կոտորած, սակայն այնտեղ եւս եղան բարդութիւններ եւ մասամբ կրօնական հալածանք: Բայց պիտի խոստովանել որ միւս գաղթօճախների համեմատութեամբ խաղաղ եւ հանգիստ եղաւ Իրանի հայութեան առօրեան:*

*Բացառիկ երեւոյթ էր 1979 թուի Իսլամական յեղափոխութիւնը, որն մասամբ շփոթ ստեղծեց մեր գաղութում: Իրան-Իրաք ութը տարիներ տեւող պատերազմը պատճառ հանդիսացաւ հազարաւոր հայ երիտասարդ պատանիների երկրից հեռացումին: Այդ պատճառով բազում ծնողներ նաեւ հեռացան երկրից, - թողնելով իրենց տարիների վաստակը - իրենց զաւակներին միանալու եւ նրանց «հովանաւորելու» պատրուակով, եւ այդպիսով սկսուեց ազգավնաս հայաթափումը, որն շարունակւում է մինչեւ այսօր:*

### ԿՐԹՕՃԱԽՆԵՐ

*Իրանի բոլոր հայաբնակ քաղաքներում եւ գիւղերում եղել են ու կան հայկական տարրական, միջնակարգ դպրոցներ եւ մանկապարտէզներ:*

*Յիշենք Թաւրիզի Հայկազեան-Թամարեան եւ Արամեան դպրոցները, որտեղ մեծ մտաւորականների հետ դասաւանդել է նաեւ տաղանդաւոր վիպասան Րաֆֆին:*

*1909 թուին հիմնուել է Ատրպատականի հայոց թեմական դպրոցը Կարապետ Ս. Եպիսկոպոս Տէր Մկրտիչեանի առաջնորդութեան օրօք: Թեմական դպրոցում պաշտօնավարել են լեզուագէտ Հրաչեայ Աճառեանը, Կարապետ Պիոնեանը, Յովսէփ Թադէոսեանը, Յակոբ Տէր Յակոբեանը (Յ. Իրազեկ), եւ շատ-շատ անուանի դէմքեր: Իր գոյութեան 27 տարուայ ընթացքում Թաւրիզի թեմականը տուել է 455 շրջանաւարտներ, որոնցից 90 տոկոսը նուիրուել է ուսուցչական ասպարէզին: Մի պահ պիտի խորհել, ինչ կը լինէր մեր կրթական վիճակը Իրա-*

*Շար.ը էջ 18*

# ՇՈՒՇԻ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԱՐԲԵՐ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՉՈՐՍ ՔԱՂԱՔՆԵՐ



*Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարի Շուշի պարախումբը իր գոյութեան ամենազբաղ ամիսները կը դիմաւորէ զանազան ճամբորդութիւններով ելոյթներ ունենալու Ամերիկայի տարբեր Նահանգներու ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ:*

*Շուշի պարախումբը կը բաղկանայ 130 երկսեռ անդամներէ, 5-30 տարեկան, որոնց յաջողութեան մղիչ ոյժն է գեղարուեստական ղեկավարուհի, Սեդա Փասքալեան-Գանթարճեան, որու անխոնջ նուիրումին շնորհիւ պարախումբը այսօր կը նկատուի Նիւ Երոքի Նիւ Ճըրզիի հայկական գաղութին փայլուն աստղը:*

*Նոյեմբեր 26, 2009, Շուշի պարախումբի երէց անդամները կը մեկնին Լոս Անճելոս, իրենց գեղեցիկ պարերով մասնակցելու համար* Armenia Fund USA Telethon*-ի հեռասփռումին:*

*Նոյեմբեր 28, 2009, «Բարեւ» ամսագրի 15րդ տարեդարձի առիթով պարախումբը ելոյթ պիտի ունենայ Շիքակոյի մէջ, մասնակցութեամբ Լոս Անճելըսէն, երաժշտական ղեկավար Անդրանիկ Մուրատեանի եւ տաղանդաւոր մեներգիչ Յովիկ Գրիգորեանի: Մանրամասնութեանց եւ տոմսերու համար դիմել Միսակ Կալեանի հեռաձայնեով՝ (847) 965-4537:*

*Այս տարի առաջին անգամ ըլլալով, Շուշի պարախումբի յանձնախումբը որ կը բաղկանայ ծնողքներէ, որոշած է ընտանիքներով եւ բարեկամներով միասնաբար Նոր Տարին դիմաւորել: Ուստի, յանձնախումբի անդամուհիներու ժրաջան աշխատանքներով, որոնք ջանք չեն խնայեր իրենց պատասխանատուութիւնները կատարելագործելու, Դեկտեմբեր 31-ին երեկոյեան ժամը 8:30ին* Fair Lawn, NJ, St. Leon *եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ Նոր Տարուան խրախճանքը: Յաւելեալ մանրամասնութիւններու եւ տեղեր ապահովելու համար հեռաձայնել Մարի Ջօքեանի (201) 745-8850 եւ կամ Սօսի Սեդրակեանին (201) 779-9007:*

*Յունուար 16, 2010-ին կէսօրէ ետք պարախումբը ելոյթ պիտի ունենայ Օրլանտոյի երկրորդական վարժարանի սրահին մէջ, հովանաւորութեամբ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ: Երեկոյեան բացառիկ ելոյթով մը Շուշիի շնորհալի պարախումբը* Walt Disney World*-ի մէջ պիտի խանդավառէ բոլոր ներկաները: Բոլորին ուրախութիւնը անսահման է:*

*Շուշի պարախումբի տարեկան վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Փետրուար 2010ին: Այս առիթով շնորհակալութիւն կը յայտնենք նուիրատուներուն,* LG Electronics, Couristan, Inc.*, Տէր եւ Տիկ. Հայկ Արիյեան եւ* Linwood Optical*:*

*Վերջապէս, Յուլիս 2010ին Շուշի պարախումբը եւ կարգ մը ծնողքներ պիտի մեկնին Միջին Արեւելք, ուր երեք շաբթուան ընթացքին ելոյթներ պիտի ունենան Ամման,* Alwatani Sporting Club*-ի հովանաւորութեամբ, իսկ Պէյրութ, Հալէպ եւ Դամասկոս Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հովանաւորութեամբ: Ուրախութիւնը անսահման է բոլոր մասնակիցներուն, որոնց համար այս ճամբորդութիւնը պիտի ըլլայ բացառիկ եւ անմոռանալի փորձառութիւն մը:*

*Կը շնորհաւորենք Սեդային եւ բոլոր անոնց որ իրականացուցին այս երազը: Բարի երթ Շուշի պարախումբին:*

*Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք այցելել* www.shushidance.org

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

www.massisweekly.com
Updated every Friday

# ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԸ

## «ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ԱՄԷՆ ԻՆՉ ՉԷ, ԲԱՅՑ ԱՌԱՆՑ ԴՐԱ ԱՄԷՆ ԻՆՉ ՈՉԻՆՉ Է»

*ԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆ*

**Մեծ է ծխելու դերը տուբերկուլոզ հիւանդութեան զարգացման գործում**

*ԻՀ - Ծխելը յաճախ ամենասովորական հիւանդութիւնների ընթացքի բարդացմանն է նպաստում, օրինակ՝ գրիպի, անգինայի: Ընդհանրապէս ծխողի մօտ այս հիւանդութիւնները աւելի քիչ արտայայտուած են ընթանում (ջերմութիւնն աւելի ցածր է եւ ախտանիշներն աւելի քիչ են), որովհետեւ նիկոտինով թուլացած օրգանիզմը պարզապէս ի վիճակի չէ ակտիւ դիմադրելու: Սակայն հենց այդ պատճառով են ծխողները աւելի երկար հիւանդանում, նրանց մօտ հիւանդութիւնն աւելի է ձգձգւում: Եւ բարդութիւնների յաւանականութիւնն էլ նրանց մօտ աւելի մեծ է, ընդ որում այնպիսի բարդութիւնների, որոնք կարող են տխուր աւարտ ունենալ:*

*Ամենամեծ վտանգը, որով սպառնում է ձեզ ծխելը, դա պաշտպանողական համակարգի աստիճանական թուլացումն է, որը ծխախոտի օրգանիզմը աղտոտելու յատկութեան հետեւանքն է: Մեր մոլորակի բոլոր բոյսերն ու կենդանիները մշտապէս ենթակայ են մանրէների, վիրուսների, մակաբոյծների կողմից յարձակման: Հիւանդութիւններից ամենամեծ պաշտպանութիւնը, որ մենք ունենք, դա մեր պաշտպանողական (իմունային) համակարգն է: Եթէ դուք առողջ էք, ձեր իմունային համակարգը կը պայքարի եւ կը պաշտպանի ձեզ այդ յարձակումներից: Բայց կարող է ձեր իմունային համակարգը արդիւնաւէտ աշխատել, եթէ դուք ձեր ամեն մի մկանը եւ օրգանը զրկէք թթուածնից եւ սննդարար նիւթերից, փոխարինելով դրանք ածխածնի օքսիդով եւ այլ թունաւոր նիւթերով:*

*Ծխելը ճնշում է պաշտպանողական համակարգը եւ իջեցնում օրգանիզմի իրեն պաշտպանելու ունակութիւնը:*

*Ծխել եւ ունենալ առողջ օրգանիզմ անհնար է:*

*ՍԱՀ - Յաճախ ծխողները սրտի ցաւեր են ունենում: Դա կապուած է սրտամկանը սնուցող պսակային անօթների սպազմի հետ: Քաղցկեղից յետոյ 2-րդ տեղում են սիրտանօթային հիւանդութիւնները: Մեխանիզմը պարզ է. նիկոտինը առաջացնում է անօթների պատերի կծկում (սպազմ): Սրտի համար աւելի դժուար է մղել արիւնը նեղացած անօթներով. բարձրանում է զարկերակային ճնշումը: Երկար ժամանակ այսպէս աշխատելով, ծխողի անօթների պատերը դառնում են պակաս էլաստիկ, ինչը յանգեցնում է հիպերտոնիայի, իշեմիայի (սնուցման խանգարման): Ծխախոտային ծուխը նուազեցնում է թթուածին կլանելու արեան ունակութիւնը եւ բարձրացնում արեան մակարդելիութիւնը: Ցաւօք սրտի, առաջին սրտի նոպան մեծ մասամբ մահացու է լինում:*

*Ծխելը կարող է հանդիսանալ նաեւ ստորին վերջոյթների անօթների կայուն սպազմի գլխաւոր պատճառը, որը նպաստում է խցանող էնդարտերիիտի - ֆլեբիտո (երակների պատերի բորբոքում) զարգացմանը առաւելապէս տղամարդկանց մօտ: Այս հիւանդութիւնը բերում է ստորին վերջոյթի հիւսուածքների սնուցման խանգարմանը, փթախտին եւ, արդիւնքում, ամպուտացիային:*

*ԱՍՀ - Ծխախոտի ծխի մէջ պարունակուող նիւթերից տուժում է նաեւ մարսողական համակարգը, առաջին հերթին ատամները եւ բերանի լորձաթաղանթը:*

*Նիկոտինը նպաստում է ստամոքսահիւթի գերարտադրմանը, ինչը կարող է յանգեցնել ստամոքսի եւ տասներկումատնեայ աղիքի խոցային հիւանդության: Առաջա-նում են ցաւեր ստամոքսի շրջանում, այրոցի զգացում, սրտխառնոց եւ փսխում: Այդ նշանները կարող են գաստրիտի, խոցային հիւանդութեան դրսեւորումներ լինեն, որոնք ծխողների մօտ շատ աւելի յաճախ են զարգանում, քան չծխողների մօտ:*

*Օրեկան 1 տուփ ծխելու սովորութիւնը ատամների վաղաժամ կորուստին է նպաստում: Ծխողների մօտ երկու անգամ աւելի յաճախ է դիտւում ատամների կարիես, քան չծխողների մօտ: Ծխախոտային խեժերի ազդեցութեան տակ ծխողի ատամների վրայ առաջանում է ատամնային փառ (քար), որը մանրէների բազմացման համար բարենպաստ միջավայր է հանդիսանում: Սրանք նպաստում են էմալի քայքայմանը եւ ատամ*

# ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

*Շարունակուած էջ 17-էն*

*նում եթէ չլինէր Թաւրիզի թեմական դպրոցը, որն փակուեց Իրանի պետութեան կողմից 1936 թուականին:*

*Նշելի է որ Իրանի առաջին մանկապարտէզը հիմնուել է 1910 թուին Թեհրանում, յայտնի մանկավարժ Տիկ. Մարգարիտ Սարվարեանի միջոցով: Պարսկական առաջին մանկապարտէզը եւս հիմնուել է մի քանի տարի յետոյ, Տիկ. Բերսաբէ Յովսէփեանի ջանքերով:*

*Կարեւոր եւ նշանակալից դեր են ունեցել Նոր Ջուղայի «Քանանեան», «Կատարինեան» դպրոցները, Թեհրանի Քուշէշ-Դաւթեան, Ղազուինի «Ռաֆֆի», Ռեշտի «Ա. Յորդանանեան», Փեհլեւու «Արաքս», Համադանի «Նուր», Քերմանշահի «Արիան», Աբադանի «Ադաբ», Ահագի «Գարուն», Մաշհեդի Սուլէյմանի «Միհրդատ», Մարաղայի «Խալաֆեան», Ուրմիայի «Մասիհա», Արաքի «Շարաֆ» եւ շատ ուրիշ դպրոցներ, որոնցից մեծ մասը այսօր դադարել են գոյութիւն ունենալուց, աշակերտութեան թուի նուազման պատճառով: Դժբախտաբար վերջին 20 տարիների ընթացքում Թեհրանում եղած 33 դպրոցներից (30,000 աշակերտ-աշակերտուհիներով) այսօր մնացել են հազիւ 13 դպրոցներ, որոնք եւս կանգնած են փակման վտանգի առաջ: Կրկնենք՝ պատճառը հայաթափումն է:*

*Զհաստատուած տուեալներով 200-250 հազար հաշուող գաղութում այսօր ապրում են 50 հազար հայեր: Անշուշտ այս թիւերը փաստական տուեալներ չունեն, թերեւս 4-5 հազարի տարբերութիւն լինի: Ազգային մարմինները պնդում են որ Իրանահայութեան թիւը այսօր 100 հազար է:*

### *ՏՊԱՐԱՆՆԵՐ*

*Առաջին անգամ Իրանում տպարան է հիմնել Խաչատուր Վարդապետ Կեսարացին 1638 թուին:*

*Տպարանը տեղադրուել է Ս. Ամենափրկչեան վանքում: Այդ պատմական տպարանի մամուլը եւ տառերը, այսօր խնամքով պահպանւում են վանքի թանգարանում: Ապա Թաւրիզում - ուր ապրում էին մեծ թուով հայեր- հիմնւում է «Թեմական խորհուրդի» տպարանը, որն տարիների ընթացքում հրատարակում է բազմահազար դասագրքեր հայոց լեզուի համար Ա.ից մինչեւ Զ. դասարան, ինչպէս կրօնական, պատմական գրքեր, օրացոյցներ, թերթեր եւայլն: Թաւրիզում ապա հիմնւում է Իրանչափ տպարանը, Կովկասահայ մտաւորական Յակոբ Աւետիսեանի միջոցով, որն հետագային տպարանը փոխադրում է Թեհրան:*

*Իսկ Թեհրանում պարբերաբար հիմնւում են «Ջաւահայ», «Փարոս», «Վերածնունդ», «Մոդեռն», «Ալիք», «Արաքս», «Ֆարաբի», «Նայիրի», «Նուրբախշ» եւ մի քանի այլ տպարաններ, որտեղ տպագրւում են բազմաթիւ գրքեր, բրօշիւրներ, օրացոյցեր, թերթեր: Իրանում տպագրւում են Բացառիկ տեսքով ու բովանդակութեամբ օրացոյցներ, որոնց նմանը չկան ուրիշ որեւէ գաղթօճախում: Յիշենք Հայկ Աճէմեանի «Մասիս»ը, Նորիկ Ստեփանեանի եւ Սեպուհ Յովհաննիսեանի «Էրօս»ը, Հայկ Գարագաշի «Վերածնունդ»ը, ապա «Գարուն», «Արեւելք», «Ալիք» օրացոյցները: Այսօր լոյս են տեսնում երեք գեղեցիկ օրացոյցներ «Ռաֆֆին», «Նայիրին», եւ «Կանթեղ»ը:*

**(Շարունակելի)**



UNITED STATES POSTAL SERVICE® Statement of Ownership, Management, and Circulation (All Periodicals Publications Except Requester Publications)

1. Publication Title: MASSIS WEEKLY
2. Publication Number: 0 6 6 7 - 3 1 0
3. Filing Date: 10-1-09
4. Issue Frequency: WEEKLY, except two weeks in August
5. Number of Issues Published Annually: 50
6. Annual Subscription Price: $50
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®): 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 — Contact Person — Telephone (Include area code): (626) 797-7680
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer): 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)

Publisher (Name and complete mailing address): SDHP 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Editor (Name and complete mailing address): DR. ARSHAG KAZANJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

Managing Editor (Name and complete mailing address): VAHE ACHABAHIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

| | | | |
|---|---|---|---|
| a. Total Number of Copies (Net press run) | | 3,500 | 3,500 |
| b. Paid Circulation (By Mail and Outside the Mail) | (1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 123 | 123 |
| | (2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 383 | 383 |
| | (3) Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS® | 2,400 | 2,400 |
| | (4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®) | 66 | 66 |
| c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4)) | | 2,972 | 2,972 |
| d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail) | (1) Free or Nominal Rate Outside-County Copies Included on PS Form 3541 | 40 | 40 |
| | (2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541 | 35 | 35 |
| | (3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail) | | |
| | (4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means) | 300 | 300 |
| e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4)) | | 375 | 375 |
| f. Total Distribution (Sum of 15c and 15e) | | 3,347 | 3,347 |
| g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3)) | | 153 | 153 |
| h. Total (Sum of 15f and g) | | 3,500 | 3,500 |
| i. Percent Paid (15c divided by 15f times 100) | | 88.7% | 88.7% |

16. Publication of Statement of Ownership

☐ If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the Oct. 31, 2009 issue of this publication. ☐ Publication not required.

# «ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ Ի՞ՆՉ ԻՐԱԳՈՐԾԵՑԻՆ ԿԷՍ ԴԱՐ»

*Շարունակուած էջ 7-էն*

*ան շեշտը դրաւ ծրագրաւորումի պակասին վրայ: Օննիկ Քէշիշեան իր գոհունակութիւնը յայտնեց նաեւ ի տես այն ճիգին, որով մեր վարժարանները ուսումնական մակարդակի գծով ետ չեն մնար պետական ծրագիրները իրագործելէ: Ճիշդ այս պատճառով հայ աշակերտը գրեթէ առանց դժուարութեան յաճախելով բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ, քայլ կը պահէ տեղացիներու հետ:*

*Դոկտ. Օննիկ Քէշիշեանի ելոյթէն ետք իր զեկոյցը քննարկողներն եղան ծանօթ մանկավարժներ Հայկուհի Փաթափութեան, Թերեզա Հայրապետեան, Գէորգ Քէօշկէրեան եւ Վազգէն Պուլղուրճեան: Անոնք եւս օգտակար առաջադրանքներ կատարեցին հայ վարժարաններու առաւել արդիւնաւէտ եւ համակարգուած ուսումնական ծրագիրներու շուրջ: Շեշտը դրին առաւել պիտանի դասագիրքերու պատրաստութեան, միասնական բլանաւորումի եւ ուսուցիչներու վերարժեւորումին վրայ:*

*Այնուհետեւ տեղի ունեցաւ միտքերու աշխոյժ փոխանակում, որուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ օրուան հանդիսատեսներէն շատեր: Ոմանք բարձր գնահատեցին մեր կրթօճախներու հայապահպանման համար բերած մեծ նպաստը: Ուրիշներ կատարեցին շինիչ քննադատութիւններ եւ առաջարկներ, ի շահ հայ նորահաս սերունդի ու մեր գաղութի առաւել յուսատու ապագայի:*

*Գովելի եւ ուսանելի ձեռնարկ մըն էր, փափաքելի է որ նման կրթադաստիարակչական բնոյթի միջոցառումներ յաճախ տեղի ունենան:*

**Գ.Մ.**

## ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՑԱԾ ՈՃԻՐԻ ԴԱՒԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

ուրացումները, որոնցմով պիտի փորձէին իրականացնել հայ իրականութենէն ներս փոքր մէկ ունեւոր հատուած մը շոյող, բաւարարող՝ անձնական եւ նիւթական շահադիտական ծրագրեր՝ հայ-թուրք բրոթոքոլներու ստորագրման երկար ժամանակի կարօտ ճանապարհին:

Քոչարեան եւ Սերժ Սարգիսեան, հարկադրաբար հայրենի իրականութեան կարենալ տէր կանգնելու, հայրենաբնակ հայ հասարակութիւնը ճնշումի տակ առած ըստ կամս առաջնորդելու համար, ստիպողական էր հակաժողովրդավարական, բռնատիրական, հալածանքի, ազատազրկման եւ ստրկացնող պետական կարգավիճակի, առաջքն առնելու համար ժողովրդական ընդդիմութիւններու, ընդվզումներու եւ ընդհարումներու:

Այս թատերախաղը իրականացնելու համար, Քոչարեան եւ Սերժ Սարգիսեան ճակատագրակից երկուորեակի համար հրամայական էր հրապարակէն վերցնել իրենց ունեցած արժանիքներով զիրենք շուքի տակ պահող Վազգէն Սարգիսեանն ու Կարէն Տէմիրճեանը եւ անոնց գործակից խորհրդարանական ղեկավար աւագանին: Ժողովուրդը իր անխառն սիրոյն, յարգանքին եւ պաշտամունքին արժանացուցած էր զանոնք, իրենց ունեցած մարդկային, ընկերային, պետական, հայրենասիրական, ժողովրդավարական եւ կառուցողական արժանիքներուն համար:

Հայ ազգի արժանաւոր հերոսներ՝ Վազգէն Սարգիսեանն ու Կարէն Տէմիրճեանը չկան այսօր: Քոչարեանի կողմէ ծրագրուած եւ Սերժ Սարգիսեանի կողմէ հետապնդուած ծրագիրը բաւական ճամբայ կտրեց հայ-թուրք փոխյարաբերութիւններու բարելաւման ճամբուն: Կը խօսուի բացուած պատմական նոր էջի մը մասին: Այդ պիտի իրականանայ, կը յուսացուի, Հայաստան-Թուրքիա սահմաններու բացման ճանապարհով: Բրոթոքոլները աղետաբեր ստորագրուեցան Հայաստանի եւ Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարներու կողմէ: Բայց պէտք է որ Ազգային ժողովը վաւերացնէ զանոնք:

Կը վաւերացնէ՞ կը մտածէք: Եթէ այո՝ հաշուեյարդարը կատարողը պիտի հանդիսանայ մեր անզուգական նահատակներ Վազգէն Սարգիսեանի ու Կարէն Տէմիրճեանի շունչով տոգորուած հերոսական ժողովուրդը:

Բիւր յարգանք ու մշտավառ խունկ մեր նահատակներու յիշատակին:

## ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

*Շարունակուած էջ 2-էն*

*րազանցէ անցնող 17 տարիներուն Հայաստանի կուտակած արտաքին պարտքի գումարը, եւ կը տրուի հակառակ միջազգային «Fitch Ratings» հաստատութեան կողմէ Հայաստանի վարկանիշի նուազեցման:*

*- Եթէ փակ սահմաններով տնտեսական երկնիշ աճ կ'արձանագրէինք, կ'արժէ՞ր առաւելագոյնը 3% աճի ակնկալիքով բանալ սահմանը, խնդրոյ առարկայ դարձնելով հողային պահանջներու մեր պատմական իրաւունքները եւ Արցախեան ազատամարտի նուաճումները:*

*- Երբ Հայաստանը նշանակելի արտածումներ չունի իր բաց սահմաններով դէպի Իրան եւ Վրաստան, ի՞նչ պիտի արտածէ դէպի Թուրքիա, երբ բացուի այդ սահմանը:*

*- Իր քաղաքացիներու իրաւունքները բռնաբարող իշխանութիւնը, կրնա՞՝ արդիւնաւէտօրէն բանակցիլ արտաքին ուժերու հետ, յանուն Հայաստանի ու հայ ժողովուրդի շահերուն:*

*- Սահմանի բացումը պիտի նպաստէ Հայաստանի՞ շահերուն թէ այն օտար տէրութեանց շահերուն, որոնք իւրացուցին Հայաստանի ռազմավարական նշանակութիւն ունեցող կառոյցները, «գոյք պարտքի դիմաց» եւ այլ գործարքներ:*

*Այս բոլոր հարցադրումներէն ետք, կա՞յ մէկը որ տակաւին կասկած ունի որ անցնող աւելի քան 11 տարիներու Հայաստանի իշխանութեանց ձախաւէր ու ազգավնաս քաղաքականութիւնն էր որ մեզ հասցուց այս խղճալի վիճակին: Կա՞յ մէկը որ տակաւին կասկած ունի, որ այս Արձանագրութիւնները դուրսէն կը պարտադրուին մեր վրայ, հակառակ մեր կամքին: Կա՞յ մէկը որ տակաւին կասկած ունի, որ այս արտաքին պարտադրանքը արդիւնք է մեր ներքին տկարութեան:*

*Հայաստանը, համայն հայութեան գոյութեան ապաւէնը, բոլորիս աչքին առջեւ արիւնաքամ կ'ըլլայ: Անցնող 11 տարիներու բեմադրութիւնները այլեւս պէտք չէ շլացնեն մեր աչքերը: Քաղբանտարկեալներու գոյութեան ի տես, աւելորդ է խօսիլ «ժողովրդավարական արժէքներու զարգացումներու» մասին: Ժողովուրդի տնտեսական տխուր վիճակին ի տես, յօդս ցնդած է «տնտեսական երկնիշ աճերու» չարանի առասպելը: Հայաստանի մեկուսացումին ի տես, ծիծաղելի դարձած է «դիւանագիտական ձեռքբերումներու» մասին խօսիլն իսկ: Երբ Սերժ Սարգսեան կը յայտարարէ թէ այս Արձանագրութիւնները «առաւելագոյնն են, որին կարողացանք հասնել այս փուլում», պատճառը այն է, որ մեր դիրքերը տկարացած են եւ այն ինչ, որ մենք կրնայինք մօտ 15 տարիներ առաջ մերժել, այսօր պարտադրուած կ'ըլլանք ընդունելու: Ինչո՞ւ: Որովհետեւ Հայաստանը մօտ կիսով դատարկուած է: Ինչո՞ւ: Որովհետեւ Արցախը Հայաստանին ամրապնդող Քաշաթաղի (Լաչինի) ազատագրումէն ետք հոն վերաբնակեցուած 15 հազար բնակիչներէն միայն 5-6 հազարը մնացած են:*

*Լռել ու չահազանգել այս վտանգներուն եւ անարդարութեանց, կը նշանակէ յանցագործ ըլլալ: Կը նշանակէ խաբել ժողովուրդը յանուն հատուածական նեղ շահերու: Յանուն այս անօրինական իշխանութեանց կերակրատաշտէն օգուտներ քաղելու: Հետեւաբար այնքան ատեն որ այս իշխանութիւնները ուժի մէջ են, հայ պետականութեան գերիշխանութիւնն ու հայ ժողովուրդի ապագան վտանգի տակ են: Ուստի մեր պայքարի առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ Հայաստանէն ներս իրաւ ժողովրդավարական կարգերու եւ օրէնքի գերակայութեան հաստատման պայքար: Ա՛յդ է ամենէն ազդեցիկ միջոցը ձախողեցնելու այս Արձանագրութիւնները եւ կանխարգիլելու անկէ յառաջանալիք պատուհասները:*

## ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 89-ՐԴ ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱՒ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 8-էն*

*անհոգութեան ի տես «մեր Ազգային պահանջատիրութեան նկատմամբ հայրենի իշխանութիւններուն անօրէն տնօրինումներուն, այլամերժ, գիջողական եւ նուաստացուցիչ կեցուածքին, ինչպէս նաեւ Հայ Դատի ուրացումին»: Որպէս հաշուետու մեր նահատակներուն, «կը պահանջուի մեզմէ վերցնել յանձնառութիւն եւ գործադրել իրենց կտակը՝ պահանջատիրութեան, հաւատքի, նուիրումի, զոհողութեան, հայրենասիրութեան, Սփիւռք եւ Հայրենիք կապերու սերտացման», որպէսզի կարենանք ըլլալ իրենց արժանի ժառանգորդները: «Հետեւաբար, այսօրուան հիմնական պատգամը կը պահանջէ մեզմէ ամենօրեայ ապրելակերպի վերածել ոգեկոչումի այս պահերը, եւ ապահովել մեր կապուածութիւնը ազգին ու հայրենիքին»: Այնուհետեւ, մանրամասն նկարագրեց հայ ժողովուրդին յատկութիւններն ու Հայոց Ցեղասպանութեան պատճառած մարդկային ու նիւթական անհաշուելի վնասները: Ուստի, «Հայ Դատն ու Պահանջատիրութիւնը պարզապէս անհերքելի եւ անժամանցելի իրաւունքներն են միայն ու միայն Հայ Ժողովուրդին»: «Թուրքը պարտի ճանչնալ իր գործադրած Հայոց Ցեղասպանութիւնը... եւ արդարօրէն հատուցանել հայ ազգի անձեռնմխելի իրաւունքները»: Ապա, եզրակացուց.*

*«Եթէ մեր պատմական անցեալը պիտի խնդրոյ առարկայ մնայ եւ անոր հետ աղերսակից հարցերը իրենց անմիջական լուծումը չի գտնեն համազգային միացեալ ճիգերով եւ իրապաշտ կեցուածքով, այլապէս, ափսո՜ս պիտի ըլլայ Հայ Դատին, Մեծ Եղեռնի եւ Հայ Ազատագրական Շարժումի մեր բիւրաւոր նահատակներուն, Հաճնոյ եւ այլ Հերոսամարտերու զոհերուն... ինչպէս նաեւ ամբողջ հայ ժողովուրդին եւ Մայր Հայաստանին...»:*

*«Բայց, այսուամենայնիւ, յաղթանակը մերն է՝ եթէ գիտակցինք եւ պահանջենք: Ուրեմն այսօր, լիցքաւորուած Հաճնոյ Հերոսամարտի եւ համայն հայութեան բիւրաւոր նահատակներուն մեզի ժառանգ թողած անձնուէր հայրենասիրութեան ոգիով, եւ ազատագրուած ու հզօր Միացեալ Հայաստանի տեսլականով՝ պիտի առաւել աշխուժացած միասնական ուժերով դիմագրաւենք արձանագրութեանց աղէտը, եւ շարունակենք պայքարը մինչեւ վերջնական յաղթանակը փառաւոր»:*

*Ծիտապուր-Հոգեճաշի աւարտին, ընդառաջելով ներկայ հասարակութեան բուռն փափաքին, հայրենակից Յակոբ Կակոսեան մեներգեց փունջ մը հայրենասիրական ու ազգային երգեր: Իսկ երբ սկսաւ երգել Կոմիտասի «Տէր Կեցո Դու զՀայս» ունկնդիրները ընդոստ ոտքի կանգնեցան: Այնուհետեւ, յիշատակելի այս ձեռնարկը աւարտեցաւ Տէր Հօր պահպանիչով»: Ներկաները հեռացան իրենց ուխտը նորոգած ըլլալու գոհունակութեամբ եւ ազգային պայքարը շարունակելու վճռակամութեամբ:*

**Յ.Ա.Կ.**

## ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 89-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*տեմբեր:*

*Թշնամին իր անթիւ անհամար գինուորներով, ճեղքելով պաշտպանութեան գիծը, մտաւ Հաճըն ու կոտորեց տասը հազարի հասնող բնակչութիւնը, որոնցմէ միայն կրցան ազատիլ չորս հարիւրը, որոնք հասան աշխարհի զանազան կողմերը եւ կազմեցին սփիւռքահայ գաղութներ: Հաճընը դատարկուեցաւ, սակայն հաճընցին չդատարկուեցաւ իր հայրենասիրութենէն եւ հաւատքէն«:*

*Ապա բեմ բարձրացաւ Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ «Գայիանէ երգչախումբը՝ խմբավարութեամբ պր. Վազգէն Քէնտիմեանի: Երգչախումբը յաջորդաբար կատարեց «Օղանաւ Եկաւ», «Կանչէ Կռունկ», «Կիլիկիա», «Պարզիր Աղբիւր» եւ «Ազգ Փառապանծ» երգերը: Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Արեգ» մանկապատանեկան պարախումբը ներկայացուց «Կարմիր, Կապոյտ, Ծիրանագոյն» խմվային պարը, պարուսոյց՝ օրդ. Սարին Արթինեան: Ապա խօսք առաւ նախկին պետական երեսփոխան եւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. տոքթ. Եղիկ Ճէրէճեանը՝ որպէսզի փոխանցէ իր սրտին խօսքը: Յարգելի ընկերը վեր առաւ հաճընցիներու խիզախ նկարագիրը եւ հայրենասիրութիւնը, նշելով որ հաճընցիները նաեւ մասնակցած են Ղարաբաղի պատերազմին եւ տուած են նահատակներ:*

*Յետոյ ելոյթ ունեցաւ ազգային-հայրենասիրական երգերու մեկնաբան Պերճ Նազգաշեանը իր սիրուած երգերու ցանկով եւ մինչեւ գիշերուան ուշ ժամերը ներկաները խանդավառեց իր թովիչ ձայնով: Այս միջոցին հարիւրաւոր հայորդիներ կը մասնակցէին մատաղի պատրաստութեան, որուն մէջ ներդրումի առիւծի բաժինը բերաւ Ս. Գէորգ եկեղեցւոյ տիկնանց վարչութիւնը: Յաջորդ օրը առաւօտեան Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն՝ Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն յիշատակին: Պատարագին քարոզեց Ս. Գէորգ եկեղեցւոյ հովուապետ՝ Արժանապատիւ Տէր Նարեկ Քհնյ. Հէճինեան:*

*Հոգեհանգստեան պաշտօնի աւարտէն ետք հաւատացեալներուն բաժնուեցաւ օրհնուած մատաղ:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տիկ. Ովսաննա Թումանեան գնահատելով Հ.Մ.Մ.ի «Պատմութեան Հետքերով» գիրքը $25 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:*


12th International
Armenia Fund
Telethon 2009
November 26, 2009 Thanksgiving Day
OUR SHUSHI
OUR SHUSHI
TELETHON 2009
©2009-Armenia Fund, Telethon 2009 official Logo
ArmeniaFund
KSCI CHANNEL 18 8am-8pm PST
Check your local TV listings or
Call 1-800-888-8897 • Coast-to-coast live broadcast • Webcast www.armeniafund.org